With financial support
from the Russian Federation

Empowered lives.
Resilient nations.

Աշխատաշուկայի քարտեզագրում ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում

Նախնական ուսումնասիրություն

Նելլի Մինասյան

Պատրաստվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ

Երևան, 2019թ.

Բովանդակություն

Բառացանկ 4

Ներածություն 6

Երիտասարդների գործազրկությունն ամբողջ աշխարհում 7

Մեթոդաբանություն 10

Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի աշխատաշուկաները 12

Կրթություն 12

Աշխատանքային ռեսուրսներ 13

Գործազրկությունն ըստ տարիքի 15

Գործազրկությունն ըստ կրթության 16

Գործազրկության ժամանակահատված 17

Գործազրկությունը սահմանող գործոնները 18

Աշխատանք գտնելու նպատակով ձեռնարկվող քայլերը 20

Աշխատանք գտնելու խոչընդոտները 21

Նախընտրելի զբաղմունքի տեսակը 24

Աշխատանքի պահանջարկ և առաջարկ՝ ըստ մասնագիտությունների 27

Ուսանողներն ըստ մասնագիտությունների 28

Մասնագիտության ընտրություն 30

Զբաղվածություն 32

Զբաղվածությունն ըստ մասնագիտությունների 32

Զբաղվածության կարգավիճակ 34

Աշխատավարձ 35

Աշխատանքի պահանջարկն ըստ շուկայի ոլորտների 37

Զարգացող աշխատաշուկաներ և առկա բացեր 42
Զբաղվածությանը նպաստող հաստատություններ 52
Համագործակցություն ակադեմիական հաստատությունների և գործատուների միջև 52
Կամավորական աշխատանք 54
Գործազրկության պատճառները 56
Գործատուների կարծիքները 57
Գործազուրկների կարծիքները 58
Եզրակացություններ 59
Հանձնարարականներ 62
Օգտագործված գրականության ցանկ 65
Հավելվածներ 68

Բառացանկ

Տնտեսապես ակտիվ բնակչություն (աշխատուժ): Ներառվում են զբաղվածները և գործազուրկները, ովքեր հետազոտվող ժամանակահատվածում աշխատանքի շուկայում ապահովում են աշխատուժի առաջարկը՝ ապրանքների և ծառայությունների արտադրության համար:

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության մեջ ներառվում են անձինք, ովքեր հետազոտվող ժամանակահատվածում չեն աշխատել և աշխատանք չեն փնտրել՝ չեն եղել զբաղված կամ գործազուրկ:

Զբաղված համարվել է 15-75 տարեկան անձն, ով հետազոտվող շաբաթում. ունեցել է վարձու կամ ոչ վարձու աշխատանք, անկախ այն հանգամանքից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր կամ սեզոնային, միանգամյա կամ պատահական, նույնիսկ, եթե այդ աշխատանքը հետազոտվող շաբաթվա ընթացքում կազմել է ընդամենը մեկ ժամ, ժամանակավորապես բացակայել է աշխատանքից՝ տարբեր պատճառներով, կամ զբաղված է եղել տնային կամ գյուղացիական տնտեսությունում, իսկ արտադրված արտադրանքը նախատեսված է եղել լրիվ կամ մասնակի իրացման, կամ սեփական վերջնական սպառման համար, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության սպառման մեջ:

Զբաղվածության մակարդակը տնտեսապես ակտիվ բնակչության մեջ զբաղվածների թվաքանակի մասնաբաժինն է:

Ոչ ֆորմալ զբաղվածությունը դիտարկվող ժամանակահատվածում ոչ ֆորմալ աշխատատեղերի հանրագումարն է, անկախ այն հանգամանքից՝ եղել են դրանք ֆորմալ, թե ոչ ֆորմալ հատվածի կազմակերպություններում կամ տնային տնտեսություններում: Ոչ ֆորմալ զբաղվածության մեջ ներառվում են. (ա) գործատուի հետ բանավոր համաձայնությամբ վարձու աշխատողները (այդ թվում՝ տնային տնտեսությունում վճարովի աշխատողները՝ այգեպան, դայակ, սպասուհի, պահակ, վարորդ և այլն), (բ) չգրանցված կազմակերպությունների սեփականատեր գործատուները և ինքնազբաղվածները, (գ) առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները, (դ) չգրանցված արտադրական կոոպերատիվների անդամները և (ե) բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանք կամ ծառայություն արտադրող (օրինակ՝ սեփական կացարանի կառուցումը) ինքնազբաղվածները, եթե համարվում են զբաղված:

Աշխատանքային ռեսուրսները տնտեսապես ակտիվ (զբաղված և գործազուրկ) և ոչ ակտիվ (աշխատանք չունեցող և աշխատանք չփնտրող) բնակչության հանրագումարն են:

Շուկայի ոլորտների խմբեր: Շուկայի յուրաքանչյուր ոլորտում ներառված ենթաոլորտների ցանկ: Ցանկին (հայերեն) կարելի է ծանոթանալ առցանց հետևյալ հղումով՝ https://www.armstat.am/file/nace/Mas1.pdf:

Ինքնազբաղվածն այն անձն է, ով աշխատում է ինքնուրույն կամ մեկ կամ մի քանի գործընկերների հետ, և հետազոտվող ժամանակահատվածում շարունակաբար աշխատողներ չի ներգրավում:

Մասնագիտությունների խմբեր: Մասնագիտությունների խմբերում ընդգրկված մասնագիտությունների ցանկին (հայերեն) կարելի է ծանոթանալ առցանց հետևյալ հղումով՝ https://www.armstat.am/file/doc/99479608.pdf:

Գործազուրկ համարվել է 15-75 տարեկան անձը, ով հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում (ներառյալ հետազոտվող շաբաթը) միաժամանակ բավարարել է հետևյալ երեք պայմաններին. (1) չի ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք, (2) ակտիվորեն փնտրել է աշխատանք՝ օգտագործելով ցանկացած միջոց, այսինքն՝ դիմել է զբաղվածության պետական և (կամ) մասնավոր ծառայություն, աշխատանք է փնտրել ծանոթների, բարեկամների, հայտարարությունների միջոցով կամ ցանկացած այլ եղանակով, (3) պատրաստ է եղել անմիջապես (այսինքն՝ առաջիկա երկու շաբաթվա ընթացքում) անցնել աշխատանքի:

Գործազրկության մակարդակը գործազուրկների տեսակարար կշիռն է տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակում: *

Խոցելի համարվող զբաղվածությունն ինքնազբաղվածների և առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամների ընդհանուր թիվն է: Նրանց դեպքում ֆորմալ աշխատանքն ավելի քիչ հավանական է, ուստի ավելի հավանական է համապատասխան աշխատանքային պայմանների բացակայությունը:[1]

* Այս սահմանումները վերաբերում են միայն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներին, իսկ Զբաղվածության պետական գործակալությունը

[1] Այս սահմանումը տրամադրել է ՄԱԿ-ը:

տեղեկատվություն է տրամադրում միայն ֆորմալ զբաղվածության և գործազրկության մասին:

Ներածություն

Հայաստանի աշխատանքի շուկային բնորոշ է մասնակցության ցածր և գործազրկության բարձր մակարդակը. *2018թ. գործազրկության մակարդակը կազմել է 17.6%* (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, 2018թ.): Նախորդ տարիների (2014-2017թթ.) տվյալները ցույց են տալիս, որ ազգային գործազրկության մակարդակը կայուն է մնում՝ կազմելով մոտավորապես 17-18%: Թեև 2018թ. երկրորդ կեսին՝ Թավշյա հեղափոխությանը հաջորդած ժամանակաշրջանում, գործազրկությունը նվազեց մինչև 15.7% (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, 2018թ.), այս նվազման պատճառը հիմնականում վերագրում են զբաղվածների՝ ոչ ֆորմալ ոլորտից ֆորմալ ոլորտին անցնելուն, այլ ոչ նոր աշխատանքին:

Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի ամբողջ բնակչության մեկ երրորդն ապրում է մայրաքաղաք Երևանում, *աշխատանքային ռեսուրսների 32% նույնպես գտնվում է Երևանում*, ինչի արդյունքում թերի են զարգանում Հայաստանի մյուս մարզերը, որտեղ զբաղվածության մակարդակն ավելի ցածր է, իսկ գործազրկության մակարդակը հասնում է մինչև *24.3% Շիրակի մարզում* (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, 2018թ.):

Վերջին տարիներին անցկացված Հայաստանի աշխատաշուկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ *երիտասարդների և կանանց շրջանում* գործազրկությունը շարունակում է լուրջ խնդիր հանդիսանալ. երիտասարդների պասիվության մակարդակը բարձր է, իսկ կանայք ավելի մեծ հավանականությամբ են պասիվ լինում, քան տղամարդիկ՝ ընտանեկան ավանդական պարտականությունների հետևանքով («Մեդիա Մոդել»ՍՊԸ, 2018թ., Սերիեր, 2014թ.): *Զբաղվածության որոշակի մակարդակներում առկա է նաև գենդերային ճեղքվածքը*: 2016թ. Համաշխարհային բանկի կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ կանայք, այդ թվում նաև բարձրագույն կրթություն ունեցողներն ավելի փոքր հավանականությամբ են ղեկավար պաշտոններ զբաղեցնում, քան տղամարդիկ: Կանայք նաև վարձատրության էական տարբերության են առերեսվում (Համաշխարհային բանկ, 2016թ.): Ըստ 2014թ. Աշխատանքի միջազգային գրասենյակի կողմից իրականացված մեկ այլ ուսումնասիրության արդյունքների, *երիտասարդների մեծամասնության անցումն աշխատաշուկա ավելի երկար է տևում, և նրանց հավելյալ վերապատրաստում է անհրաժեշտ մշտական աշխատանք գտնելուց առաջ* (Սերիեր, 2014թ.): Ի վերջո, «Սեյվ դը չիլդրեն» (Save the Children Armenia) կազմակերպության հետ համատեղ «Մեդիա Մոդել» ՍՊԸ-ի կողմից անցկացված հետազոտությունը ցույց է տալիս, որ *աշխատանքի շուկայում առկա պահանջարկի և կրթական առումով*

որակավորված մարդկանց առաջարկի միջև առկա բացը պայմանավորված է նաև օժանդակող մարմնի բացակայությամբ, որը կարող է դյուրացնել անցումը և բացահայտել շուկայում առկա անհամապատասխանությունները: («Մեդիա Մոդել», 2018թ.):

Հայաստանի մարզերում աշխատաշուկայի համապատասխան պայմաններն ու յուրաքանչյուր մարզի զարգացման միտումներն ուսումնասիրելու նպատակով նախկինում անցկացված որևէ հետազոտություն չի հայտնաբերվել:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում աշխատաշուկայի ներկա վիճակը, մասնավորապես, աշխատուժի առաջարկը և պահանջարկը, վարձատրության սանդղակը, զբաղվածության և գործազրկության մակարդակները, կամավորության, պրակտիկայի և աշկերտության հնարավորությունները, ինչպես նաև աշխատուժի ժողովրդագրական այլ ասպեկտները:

Այս հետազոտությունն իրականացվել է ՄԱԶԾ տեխնիկական առաջադրանքով, այն նախնական ուսումնասիրություն է հանդիսանում ՄԱԶԾ «Ապագայի հմտություններ և աշխատատեղեր՝ մարզաբնակ երիտասարդների համար» ծրագրի իրականացման համար:

Երիտասարդների գործազրկությունն ամբողջ աշխարհում

Երիտասարդների գործազրկությունը համաշխարհային կարևորագույն խնդիրներից է, որը խոչընդոտ է հանդիսանում երկրների քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացման համար և բացասաբար է ազդում ամբողջ աշխարհում կայունության վրա (Պիտերս, 2013): Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալներով, ամբողջ աշխարհում երիտասարդների շրջանում գործազրկությունն աճել է 12% -ից 2008թ.-ին մինչև 13% 2018թ.: Այնուամենայնիվ, այս աճը հավասարաչափ չէ բաշխված երկրների միջև. արաբական երկրներում գործազրկության մակարդակն ամենաբարձրն է՝ 30%, մինչդեռ Արևելյան Ասիայում ամենացածր մակարդակն է՝10%: Ֆրիմանի և Ուայզի (1982), Բլանչֆլաուերի և Ֆրիմանի (2000) և Բելլի ու Բլանչֆլաուերի (2010) ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ երիտասարդների գործազրկությունը լրջագույն խնդիր է երկրների համար, քանի որ երկարատև գործազրկությունը մշտական ազդեցություն է գործում երիտասարդների և աշխատաշուկայի արդյունքների վրա: Կիպեշայի և Մսիգվայի աշխատությունում նշված (2013թ., էջ 67) Քլարկի և Սամերսի հետազոտության համաձայն, «Աշխատանք գտնելու փորձերի ձախողումը հանգեցնում է բարոյալքմանը, սեփական մարդկային կապիտալի արժեզրկմանը և աշխատանք

գտնելու կանխատեսման վատթարացմանը, որի արդյունք է հանդիսանում հասարակությունից արտաքսումը»:

Մի շարք էմպիրիկ (փորձառական) ուսումնասիրություններ պնդում են, որ նախկինում ունեցած գործազրկությունն ազդում է երիտասարդների ապագա վարձատրության և աշխատանքային ուղու վրա (Մրոզ և Սեվիջ, 2001թ.): Ավելին, երիտասարդները զրկվում են աշխատուժից այն տարիներին, երբ նրանց մասնակցությունն առավելագույն շահույթ կարող էր բերել (Բեն-Պորաթ, 1967թ.; Բլայնդեր և ուրիշներ, 1976թ.): Երկարատև գործազրկության պատճառով երիտասարդներն ավելի շատ են վերապատրաստման ձգտում կամ պարզապես մնում են ընտանիքում՝ այդպիսով խորացնելով անբարենպաստ ազդեցությունը: Հետազոտության ընթացքում բացահայտված երիտասարդների գործազրկության հիմնական թերությունները հետևյալն են. վաստակվող գումարի կրճատում, գործազրկության ժամանակաշրջանի երկարաձգման վտանգ, անվստահելի զբաղվածության հավանականություն՝ կարճաժամկետ պայմանագրերի տեսքով, և նույնիսկ ապագայում անբարենպաստ ազդեցություն գործազուրկների առողջության և բարեկեցության վրա (Բելլ և Բլանչֆլաուեր, 2011թ., Եվրոպական հանձնաժողով 2014թ., Կլետցեր և Ֆերլի, 2003թ., Բըրջես և ուրիշներ, 2003թ.): Ըստ Քարդի և Լեմյուի (2000թ.), ոչ թե աշխատանքի բացակայությունը, այլ աշխատաշուկայի թույլ պայմաններն ու ցածր աշխատավարձն (խոցելի զբաղվածություն) են ստիպում երիտասարդներին տանը նստել կամ երկարաձգել կրթությունը (Քարդ և Լեմյու, 2000թ., Պիտերս, 2013թ.):

Ըստ Բրինի (2005թ.), տարբեր երկրներում խիստ տարբեր են երիտասարդների գործազրկության պատճառները, որոնք բխում են ինստիտուցիոնալ, տնտեսական և մշակութային գործոններից: Եթե 1990-ական թթ. երիտասարդների գործազրկության հիմնական պատճառները վերագրում էին արդյունաբերության ոլորտի կառուցվածքային փոփոխություններին և այդ փոփոխությունների արդյունքում առաջացած որակավորումների անհամապատասխանությանը (Քլարկ և Սամերս, 1982թ.; Բլանչֆլաուեր և Ֆրիման, 2000թ.), ապա 2000-ական թթ. սկզբում հիմնական փաստարկն այն էր, որ երիտասարդների գործազրկությունը բացատրվում է գործարար շրջափուլի պայմաններով և այնպիսի ինստիտուցիոնալ գործոններով, ինչպիսիք են փորձի պակասը, որակավորում ունեցող մասնագետների պակասը, կարճաժամկետ զբաղվածությունը, նաև ուսումնական հաստատությունից աշխատանքի անցնելու դժվարությունները (Բլանչֆլաուեր և Ֆրիման, 2000թ.; Խիմենո, և Ռոդրիգես-Պալենցուելա, 2002թ., ՏՀԶԿ, 2006թ., Դիտրիխ, 2003թ., Մարտին, 2009թ., Բելլ և Բլանչֆլաուեր, 2011թ.):

Բրինի (2005թ.) ուսումնասիրությունը սահմանում է երկու հիմնական ինստիտուցիոնալ խնդիր, որոնք ազդում են գործազրկության մակարդակների վրա. կրթական համակարգեր և աշխատաշուկայի կանոնակարգում: Ըստ Մորիսի և ուրիշների (1986թ.), Ալմենդինգերի (1989թ.), Հաննանի և ուրիշների (1997թ.) և Միլլերի և Շավիթի (1998թ.), երիտասարդների գործազրկությունը պայմանավորված է կրթության

որակով այն առումով, որ այն կոնկրետ հմտություններ և համագործակցություն է ապահովում ուսումնական հաստատությունների և գործատուների միջև: Զարգացող երկրների մեծ մասում տեղական կրթությունը չի ապահովում երիտասարդների զբաղվածությունը, եթե խոսքը արհեստագործական կրթության մասին չէ: Ըստ Բրինի (2005թ.) ուսումնասիրության, արհեստագործական կրթությունը մեծ ազդեցություն ունի, այն հմտություններով է զինում երիտասարդներին և նվազեցնում գործազրկության հավանականությունը: Պիտերսը (2013թ.) պնդում է, որ արհեստագործական կրթությունը լուրջ արդյունքներ չի գրանցում զարգացող երկրներում՝ մասնավոր հատվածի հետ թույլ կապերի և մշտադիտարկման համակարգի բացակայության պատճառով:

Ըստ Բոնանոմիի և ուրիշների (2019թ.), Իտալիայում երիտասարդների գործազրկությունը մեծապես պայմանավորված է ընտանիքին կապվածությամբ և ընտանիքի աջակցությամբ: Տանզանիայում երիտասարդների զբաղվածության կարգավիճակի վրա ազդող կարևոր գործոններից են գենդերը, աշխարհագրական դիրքը, կրթական համակարգը, գործարար հմտությունների բացակայությունը, ոչ գրավիչ գյուղատնտեսական ոլորտը, ինչպես նաև ամուսնական կարգավիճակը (Մյեմա, 1997թ.): Բուլղարիան ուսումնասիրելիս Դմիտրովը (2012թ.) պնդում է, թե երիտասարդների գործազրկության հիմնական որոշիչ գործոններ են դպրոցը ժամանակից շուտ լքելը, կրթության և գործարար շրջափուլի ցածր որակը, նաև սոցիալական կարգավիճակը և ընտանեկան պատմությունը: Զարգացող և զարգացած երկրները համեմատող Քվինտինիի և Մարտինի (2014թ.) ուսումնասիրության համաձայն, զարգացած երկրների երիտասարդների համեմատ, զարգացող երկրներում երիտասարդների մոտ ավելի երկար է տևում անցումը դպրոցից դեպի աշխատաշուկա, նրանք ավելի շուտ են լքում ուսումը, նրանց մոտ ավելի բարձր է նաև ոչ ակտիվության մակարդակը:

Վերանայված գրականությունից կարելի է եզրակացնել, որ երիտասարդների գործազրկությունը բացասաբար է ազդում ամբողջ աշխարհի հասարակությունների զարգացման վրա և պայմանավորված է սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական զանազան գործոններով՝ միկրո և մակրո մակարդակներում: Յուրաքանչյուր տարածաշրջանի և ազգության պարագայում այդ գործոնները յուրահատուկ են: Գործազրկության դեմ պայքարող գործողությունները պետք է հետազոտություն ներառեն և հաշվի առնեն թիրախային տարածաշրջանին բնորոշ բոլոր գործոնները:

Մեթոդաբանություն

Հիմնվելով ՄԱԶԾ տեխնիկական առաջադրանքում զետեղված ցուցումների վրա՝ սույն ուսումնասիրության ընթացքում գրասենյակային ուսումնասիրության և քանակական ու որակական բաղադրիչների համակցված մեթոդաբանություն է կիրառվել:

Այս հետազոտության նպատակն է աշխատաշուկայի քարտեզագրում իրականացնել թիրախային տարածքներում՝ շուկայի ներկա վիճակը հասկանալու և առկա միտումներն ու հնարավորությունները բացահայտելու նպատակով: Ավելի կոնկրետ, այս հետազոտությունը հետևյալ նպատակներն է հետապնդում.

- Չափել թիրախային մարզերում զբաղվածության/գործազրկության մակարդակները և հասկանալ աշխատուժի բաշխվածությունն ըստ տարիքի, սեռի և մասնագիտությունների (ներառյալ ձեռնարկատիրությունն ու ինքնազբաղվածությունը գյուղատնտեսական ոլորտում),
- Ուսումնասիրել առկա աշխատանքի հնարավորություններն ու աշխատանքի առաջարկները և բացահայտել առաջարկի և պահանջարկի միջև առկա ճեղքվածքը,
- Չափել թիրախային մարզերում աշխատուժի վարձատրությունն ըստ ժողովրդագրական խմբերի և բացահայտել առկա միտումները,
- Ուսումնասիրել թիրախային մարզերում կամավորական աշխատանքի, պրակտիկայի և աշկերտության օրինակները և բացահայտել առկա հնարավորությունները, նաև
- Համադրել վերը նշված նպատակներից ստացված տեղեկությունները՝ այդպիսով բացահայտելով աշխատաշուկայի միտումները, աճող ոլորտները և պոտենցիալ հնարավորությունները:

Գրասենյակային ուսումնասիրություն

Հետազոտության թիրախային ոլորտների մասին տվյալները հավաքագրվել են հասանելի տարբեր աղբյուրներից (կառավարության գրասենյակներ, միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ և այլն): Վիճակագրական վերլուծություն իրականացնելու, այդ թվում դիտարկվող փոփոխականների միջև պոտենցիալ հարաբերակցությունը պարզելու համար օգտագործվել են հասանելի տվյալների շտեմարանները:

Խորքային հարցազրույցներ

Յուրաքանչյուր մարզում դեմ առ դեմ հարցազրույցներ են անցկացվել զարգացման ներուժ ունեցող շուկայական ոլորտներում ակտիվ երեք-չորս ընկերությունների մարդկային ռեսուրսների գծով ղեկավարների հետ: Այս ոլորտների թվում է մշակող արդյունաբերությունը, զբոսաշրջությունն ու ծառայությունների մատուցումը թիրախային բոլոր մարզերում, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաները (SS) Լոռու և Շիրակի մարզերում: Հարցազրույցներ են իրականացվել մարզպետարանների ներկայացուցիչների հետ՝ յուրաքանչյուր մարզի զարգացման միտումները հասկանալու նպատակով: Հարցազրույցներ են անցկացվել տեղի ՀԿ-ների հետ՝ կամավորական աշխատանքի ոլորտում ներկա իրավիճակը և զարգացման միտումները հասկանալու համար:

Քննարկումներ ֆոկուս խմբերում

Յուրաքանչյուր մարզում մեկական քննարկում է անցկացվել ֆոկուս խմբում տարբեր տարիքի ու մասնագիտության գործազուրկների հետ:[2] Մասնագիտություններն ընտրվել են գրասենյակային հետազոտության արդյունքների հիման վրա: Ֆոկուս խմբերին մասնակցել են այն մասնագիտությունների տեր մարդիկ, որոնց պարագայում գործազրկության մակարդակը բարձր է: Ֆոկուս խմբի մասնակիցների թիվը տատանվում էր 6-ից 10-ը:[3]

[2] Գործազուրկների թվում ներառված են և' նորավարտ երիտասարդներ, և' աշխատանքային փորձ ունեցող մասնագետներ, ովքեր աշխատանք են փնտրում:

[3] Ֆոկուս խմբերի ընտրանքը ներկայացուցչական չէ. այն պարզապես թույլ է տալիս պատկերացում կազմել յուրաքանչյուր մարզում տիրող իրավիճակի մասին:

Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի աշխատաշուկաները

Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի մշտական բնակչությունը մոտ 220 հազար է կազմում, իսկ Տավուշում՝ 120 հազար: Այս բոլոր մարզերում սեռերի բաշխվածությունը գրեթե հավասարաչափ է, իսկ երիտասարդներն ընդհանուր բնակչության թվի 25-29 տոկոսն են կազմում: Բոլոր մարզերում բնակչության նվազման մակարդակը մինչև 2% է կազմում (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, 2018թ.): Տե՛ս ստորև Աղյուսակ 1-ը:

Աղյուսակ 1. Մարզեր, ժողովրդագրական տվյալներ, 2018թ.

Մարզեր	Բնակչություն	Սեռ, %	Երիտասարդներ (18-34), %	Նվազման մակարդակ, %
Շիրակ	235,380	Տղամարդ 47% Կին 53%	27	1.6
Լոռի	217,363	Տղամարդ 46% Կին 54%	25	1.7
Տավուշ	123,493	Տղամարդ 48% Կին 52%	25	0.7
Գեղարքունիք	229,711	Տղամարդ 50% Կին 50%	29	0.4

Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, 2018թ.

Կրթություն

Բոլոր մարզերի բնակիչների մեծամասնությունը միջնակարգ կրթություն ունի, դրան հաջորդում է միջին մասնագիտական և բարձրագույն կրթությունը: Շատ սահմանափակ է արհեստագործական կրթություն ունեցող մարդկանց թիվը, նրանք հիմնականում Շիրակի և Տավուշի մարզերում են: Այս մարզերից ոչ մեկում անգրագետ մարդիկ գրեթե չկան (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան, 2017թ.): Տե՛ս ստորև Նկար 1:

Նկար 1. Կրթության մակարդակը մարզերում, 2017թ.



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան 2017թ.

Աշխատանքային ռեսուրսներ

Մարզերում աշխատանքային ռեսուրսները մարզի ընդհանուր բնակչության 66-ից (Գեղարքունիք) 85 (Լոռի) տոկոսն են կազմում: Տնտեսապես ակտիվ բնակչությունը (աշխատուժը) աշխատանքային ռեսուրսների կեսն է կազմում: Բոլոր չորս մարզերում գործազուրկ է աշխատանքային ռեսուրսների մեկ քառորդը կամ մարդկանց ավելի քիչ թիվը. Շիրակում գործազրկության մակարդակն ամենաբարձրն է՝ 24%, մինչդեռ Գեղարքունիքում այն ամենացածրն է՝ 5%: Բոլոր չորս մարզերում տղամարդկանց շրջանում գործազրկության մակարդակն ավելի բարձր է, քան կանանց շրջանում (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատանքի շուկան ՀՀ-ում, 2018թ.): Տե՛ս ստորև Նկար 2 և 3:

Նկար 2. Աշխատանքային ռեսուրսները մարզերում, 2017թ.



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2018թ.

Նկար 3. Գործազրկությունը մարզերում ըստ սեռերի, 2017թ.



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2018թ.

Ուսումնասիրված բոլոր մարզերում քաղաքներում գործազրկության մակարդակն ավելի բարձր է, քան գյուղերում, թեև զբաղվածությունը գրեթե հավասարաչափ է բաշխված գյուղական և ոչ գյուղական ոլորտներում: Քաղաքներում գործազրկության ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Լոռիում՝ գործազուրկների 89%-ը քաղաքաբնակ էին: Այնուհետև հաջորդում են Շիրակը, Տավուշը և Գեղարքունիքը: Գեղարքունիքում գործազրկությունը գրեթե հավասարաչափ է բաշխված քաղաքային և գյուղական բնակավայրերում: Տե'ս ստորև Նկար 4:

Նկար 4. Գործազրկությունը մարզերում ըստ բնակավայրի և ոլորտի, 2017թ.



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2018թ.

Գործազրկությունն ըստ տարիքի

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծության համաձայն, ուսումնասիրված բոլոր մարզերում գործազրկության ամենաբարձր մակարդակ է նկատվել երիտասարդների 18-34 տարիքային խմբում: Գործազրկության տեսանկյունից հաջորդ առավել խոցելի տարիքային խումբ են կազմում 65 տարեկանից բարձր անձինք: Ուսումնասիրված բոլոր մարզերում առավելագույն զբաղվածություն է արձանագրվել միջին տարիքի (35-54) բնակչության շրջանում: Դրան հակառակ, Զբաղվածության պետական գործակալության[4] տվյալների համաձայն, 2018թ. գործազուրկների մեծամասնությունը պատկանում էր 35-54 տարիքային խմբին, դրան հաջորդում էր 20-34 տարիքային խումբը թիրախային բոլոր մարզերում: Տե՛ս ստորև Նկար 5 և 6:

[4] Զբաղվածության պետական գործակալությունը պետական կառավարման մարմին է, որ համագործակցում է գործատուների հետ և օգնում գործազուրկներին աշխատանք գտնել:

Նկար 5. Ոչ եկամտաբեր գործունեությունն ըստ տարիքային խմբի



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան 2017թ.

Նկար 6. Գործազրկությունն ըստ տարիքային խմբի



Աղբյուր՝ Հայաստանի զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.

Տվյալների միջև նման հակասությունը կարող է մի շարք պատճառներ ունենալ, այդ թվում (1) այն փաստը, որ 18-34 տարիքային խմբում մեծ թիվ են կազմում ուսանողները, որոնք բուհում սովորելու առաջին տարիներին չեն աշխատում, (2) այն փաստը, որ գործազուրկներից ոմանք են միայն գրանցված Զբաղվածության պետական գործակալությունում, և ամբողջ բնակչությունը չեն ներկայացնում (3) Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը չափում է եկամուտ բերող ցանկացած գործունեություն, մինչդեռ Զբաղվածության պետական գործակալությունը զուտ գործազրկության վերաբերյալ ֆորմալ տվյալներ է տրամադրում: Այդուհանդերձ, երկու աղբյուրներն էլ ցույց են տալիս, որ երիտասարդների գործազրկությունը խնդիր է հանդիսանում մարզերում, և հաստատում են նախորդ ուսումնասիրությունների արդյունքներն առ այն, որ կրթությունից զբաղվածություն անցումը երկար ժամանակ է պահանջում, և անհրաժեշտ է լուծում տալ այդ խնդրին:

Գործազրկությունն ըստ կրթության

Զբաղվածության պետական գործակալության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրված մարզերում ֆորմալ գործազուրկ մարդկանց կեսը միջնակարգ կրթություն ունի, իսկ կրթական մակարդակի աճին զուգահեռ Զբաղվածության պետական գործակալությունում գրանցված գործազուրկ մարդկանց

թիվը նվազում է: Նույն իրավիճակն է արձանագրվել որոշ մարզերում Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների պարագայում. Շիրակի և Տավուշի մարզերում արհեստագործական, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցող մարդկանց շրջանում գործազրկության մակարդակն ավելի ցածր է, քան միջնակարգ և միջնակարգից ցածր կրթություն ունեցող մարդկանց դեպքում:[5] Լոռիում, սակայն, միջնակարգ կրթություն ունեցող մարդիկ ավելի շատ են զբաղված, քան արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ունեցողները: Գեղարքունիքում միջնակարգ կրթություն ունեցող մարդկանց շրջանում զբաղվածության մակարդակն ամենաբարձրն է, մինչդեռ այս մարզում բարձրագույն կրթություն ունեցող շատ քիչ մարդիկ են զբաղված:[6] Տե՛ս ստորև Նկար 7 և 8:

Նկար 7. Գործազրկությունն ըստ կրթության մակարդակի



Աղբյուր՝ Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.

Նկար 8. Զբաղվածությունն ըստ կրթության մակարդակի



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի հետազոտության տվյալների շտեմարան 2017թ.

Գործազրկության ժամանակահատված

Երկարատև գործազրկությունը գերակշռում է Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում. գործազուրկների կեսը աշխատանք չի ունեցել ավելի քան երեք տարի, ու շատ քիչ մարդ է գործազուրկ եղել մեկ տարուց ավելի պակաս

[5] Արդյունքների վիճակագրական նշանակալիությունն անհնար էր ստուգել տվյալներում դեպքերի փոքր թվի պատճառով:
[6] Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը չափում է նույն կրթական խմբում զբաղվածների համամասնությունը:

ժամկետով: Ինչպես նշվում է վերանայված գրականության մեջ, երկար ժամանակ գործազուրկ մարդիկ հեռանում են աշխատաշուկայից և կորցնում իրենց հմտությունները, ու աշխատանքի վերադառնալը նրանց համար ավելի դժվար է դառնում: Տե՛ս ստորև Նկար 9 և 10:

Նկար 9. Գործազրկության ժամանակահատված



Աղբյուր՝ Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.

Նկար 10. Գործազրկության ժամանահատված



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի հետազոտության տվյալների շտեմարան 2017թ.

Գործազրկությունը սահմանող գործոնները

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծությունը գործազրկությանը նպաստող մի շարք գործոններ է բացահայտում, ինչպես նաև գործազուրկների կողմից աշխատանք գտնելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերը և աշխատանքի փնտրտուքում հանդիպող խոչընդոտները: Բոլոր մարզերում գործազուրկների մեծ մասը հայտնել է, որ աշխատանք չունի «այլ պատճառներով» (կոնկրետ նշված չէ), այնուհետև հաջորդում են թոշակառու լինելը, տնային տնտեսությամբ զբաղվելը, ընտանեկան պարտականությունները, նաև ուսանող կամ աշակերտ հանդիսանալը: Ընդհանուր առմամբ, նշված պատճառներից երեքի պարագայում գործազուրկ կանանց և տղամարդկանց միջև տարբերություններ չեն նկատվել: Զգալի տարբերություն կա գործազուրկ կանանց և տղամարդկանց միջև, երբ

որպես պատճառ նշվում են ընտանեկան պարտականությունները: Ստացված տվյալները հաստատում են Հայաստանում անցկացված նախորդ ուսումնասիրությունների արդյունքները. Հայաստանում երեխաների և ընտանիքի խնամքը կանանց գործազրկության պատճառներից մեկն է: Տե՛ս ստորև Նկարներ 11-14:

Նկար 11. Աշխատանքի բացակայության պատճառները Շիրակում



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան 2017թ.

Նկար 12. Աշխատանքի բացակայության պատճառները Լոռիում



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան 2017թ.

Նկար 13. Աշխատանքի բացակայության պատճառները Տավուշում



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան 2017թ.

Նկար 14. Աշխատանքի բացակայության պատճառները Գեղարքունիքում



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան 2017թ.

Աշխատանք գտնելու նպատակով ձեռնարկվող քայլերը

Ուսումնասիրված բոլոր մարզերում լայնորեն կիրառվում է աշխատանք գտնելու նպատակով ընկերներին, բարեկամներին, ծանոթներին հարցուփորձ անելը: Այս գործելաձևն ամենաշատը կիրառվում է Գեղարքունիքում, այնուհետև Շիրակում: Թեև Լոռու և Տավուշի մարզերում այս մեթոդը նույնպես օգտագործվում է, դրա կիրառությունը համեմատաբար փոքր է: Լոռիում և Տավուշում աշխատանք գտնելու հիմնական քայլն ուղղակիորեն գործատուին դիմելն է: Շիրակում և Լոռիում մարդիկ նաև թափուր աշխատատեղերի հայտարարություններ են կարդում: Շիրակում, Լոռիում և Գեղարքունիքում մարդկանց փոքր տոկոս աշխատանք է փնտրում՝ մեկնելով արտասահման: Տե'ս ստորև Նկար 15:

Նկար 15. Աշխատանք գտնելու նպատակով ձեռնարկվող քայլերն ուսումնասիրված բոլոր մարզերում



Աղբյուր՝ Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.

Ֆոկուս խմբերի քննարկումների արդյունքները ցույց են տալիս, որ թիրախային չորս մարզերի բոլոր մասնակիցներն անցել են աշխատանք փնտրելու և դիմելու սովորական, ֆորմալ գործընթացը, այդ թվում առցանց տեղադրված հայտարարություններին հետևելը, ինքնակենսագրական ուղարկելը և գործատուներին դիմելը: Այդուհանդերձ, արդյունքները ցույց են տալիս, որ գործազուրկներից ոմանց մոտ ինքնակենսագրական կազմելու և մոտիվացիոն նամակ գրելու պարագայում առկա է գրավոր հմտությունների պակաս: Վերլուծությունը հաստատում է վիճակագրական տվյալները. բարեկամների և ընկերների օգնությամբ աշխատանք փնտրելը լայնորեն տարածված է բոլոր չորս մարզերում: Ըստ մասնակիցների, աշխատանքի ընդունման գործընթացում սովորական երևույթ է հովանավորչությունը, նրանցից շատերը բախվել են դրան աշխատանք փնտրելիս:

Շիրակում մասնակիցների մեծ մասն ակտիվ կերպով աշխատանք էր փնտրում. դրան հաջորդում էր Լոռու մարզը: Տավուշում մասնակիցներն ավելի պասիվ էին աշխատանք փնտրում, քան Լոռիում և Շիրակում: Գեղարքունիքում մասնակիցների մեծ մասը պարզապես մի քանի քայլ էր ձեռնարկում թափուր աշխատատեղերին ծանոթանալու համար և ավելի շատ հույսը կապում բարեկամների ու ընկերների հետ:

Երիտասարդներից շատ քչերն են առցանց աշխատանք փնտրում, թեև նրանցից ոմանք արդեն առցանց աշխատելու որոշակի փորձ ունեն:

Վերլուծությունից կարող ենք եզրակացնել հետևյալը. ընդհանուր առմամբ, աշխատանք փնտրողները գիտեն և կիրառում են աշխատանք գտնելու սովորական քայլերը, սակայն ինքնակենսագրական գրելու առումով հմտությունները բավարար չեն: Աշխատանքի ընդունման գործընթացի նկատմամբ վստահությունը մեծ չէ, ուստի մարդիկ հակված են դիմել ընկերներին ու ծանոթներին, նաև համատարած կարծիք կա հովանավորչության և ծանոթությամբ աշխատանքի տեղավորելու գործելակերպի վերաբերյալ: Ստացված տվյալները վկայում են նաև այն մասին, որ քիչ մարդիկ են վստահում զբաղվածության պետական գործակալությանը, իսկ երիտասարդներն աշխատանք փնտրելիս սկսել են օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

Աշխատանք գտնելու խոչընդոտները

Ուսումնասիրված բոլոր մարզերում գործազուրկների մեծ մասը նշել է աշխատատեղերի բացակայությունը որպես աշխատանք գտնելու հիմնական խոչընդոտ: Ավելի քիչ թվով մարդիկ որպես խոչընդոտ են նշել որակավորմանը համապատասխան աշխատատեղերի պակասը բոլոր մարզերում: Ցածր աշխատավարձը/եկամուտը խոչընդոտ է համարել բոլոր մարզերի հարցվածների մինչև 15 տոկոսը, բացառությամբ Գեղարքունիքի մարզի: Լոռիում և Շիրակում նշված

խոչընդոտները ներառել են անբավարար աշխատանքային փորձը, աշխատանքային երկար ժամերը և անկատար իրավական համակարգը: Շատ քիչ թվով մարդիկ են որպես խոչընդոտ նշել տարիքային կամ որևէ այլ խտրականությունը, համակարգչային կամ լեզվական գիտելիքների պակասը: Շատ քիչ մարդ է նշել առհասարակ խոչընդոտների բացակայությունը: Տե'ս ստորև Նկար 16.

Նկար 16. Աշխատանք գտնելու խոչընդոտներն ուսումնասիրված բոլոր մարզերում



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան 2017թ.

Մարզերում գործազուրկների շրջանում անցկացված հարցազրույցները նույնպես բացահայտում են վերը նշված պատճառները որպես աշխատանք փնտրելու գործընթացը խոչընդոտող գործոն: Այդ գործոնների շարքում մարդիկ թվել են աշխատանքային փորձի բացակայությունը, նշելով, որ երիտասարդների՝ աշխատանքային փորձ չունենալու հիմնական պատճառը ֆորմալ համալսարանական աշկերտության ծրագրերի անբավարարությունն է: Բոլոր մարզերում, մեծամասամբ Շիրակում և Գեղարքունիքում, գործազուրկները որպես խանգարող գործոն նշել են հովանավորչությունը, ինչպես նաև գործատուի կողմից աշխատակիցների շահագործման գործելակարգերը, օրինակ՝ աշխատակիցներին հավելյալ ժամեր աշխատացնելը, քիչ վճարելը, Աշխատանքային օրենսգրքի պահանջներն ընդհանրապես չկատարելը: Հակառակ դրան, թեև Լոռիում և Տավուշում մասնակիցների պնդմամբ առկա աշխատատեղեր չկային, ոմանք հրաժարվում էին ադմինիստրատիվ բնույթի աշխատանքից հավելյալ ժամեր աշխատելու պահանջի և ցածր վարձատրության պատճառով, կամ հրաժարվում էին աշխատանքից, քանի որ դա իրենց մասնագիտական ոլորտից դուրս էր: Մասնակիցներից ոմանք միայն

«գրասենյակային աշխատանք» էին ցանկանում, բայց գաղափար չունեին տվյալ աշխատանքի բնույթի մասին: Գործազուրկների կարծիքով, գործազրկության երկու այլ կարևոր պատճառներից են դպրոցներում կարիերայի վերաբերյալ խորհրդատվության բացակայությունը, ինչի հետևանքով երիտասարդները որևէ մասնագիտական ուղի են ընտրում՝ առանց հասկանալու դրա հետագա ընթացքը, ինչպես նաև համալսարանական մակարդակի հնացած կրթական համակարգը, որը գործատուներին անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ չի ապահովում:

Հանրային տրանսպորտի բացակայությունը նույնպես այն խնդիրներից է, որ բարձրաձայնել են հիմնականում ուսուցիչներն ուսումնասիրված բոլոր մարզերում: Հանրային տրանսպորտի բացակայության պատճառով որոշ դպրոցներում դեռևս ուսուցիչների պակաս կա, մինչդեռ ուսուցիչների մի մասը դեռ գործազուրկ է:

Հետազոտության մասնակիցներից մեկը՝ Շիրակի մարզից մի ուսուցիչ, ասել է հետևյալը. «Աշոցքի շրջանի գյուղերից մեկում ուսուցչի թափուր տեղ կա: Ես կցանկանայի դիմել այդ աշխատանքի համար, բայց տրանսպորտն անկանոն է աշխատում, ու ես չեմ կարողանա տեղ հասնել: Ձմռան ամիսներին գյուղից ընդհանրապես տրանսպորտ չկա»:

Ի հավելումն երիտասարդների գործազրկության վերը նշված պատճառների, մարզերում հարցված գործատուները նշել են նաև փափուկ հմտությունների և տվյալ ոլորտին բնորոշ գիտելիքի պակասը երիտասարդների շրջանում: Ըստ գործատուների, դրա հիմնական պատճառը մարզային համալսարանների հնացած կրթական համակարգն է:

Աղյուսակ 2. Փափուկ հմտություններ և հմտություններ, որ անբավարար են երիտասարդների շրջանում ուսումնասիրված մարզերում, 2019թ.

Հաղորդակցման հմտություններ
Որոշում կայացնելու հմտություններ
Առաջնորդության և կոնֆլիկտների կառավարման հմտություններ
Կառավարման հմտություններ
Մարքետինգի հմտություններ

Ձեռնարկատիրական հմտություններ
Բազային համակարգչային հմտություններ (Word, Excel, հաղորդակցություն էլ. փոստով)
Ինքնակենսագրական և մոտիվացիոն նամակ գրելու բազային հմտություններ
Աշխատաշուկայում պահանջարկ ունեցող համակարգչային ծրագրերի իմացություն (հաշվապահական ծրագրեր, սպասարկման ծրագրեր, հյուրանոցների կառավարման ծրագրեր)
Օտար լեզուների իմացություն
Զբոսաշրջության և ծառայությունների տրամադրման ոլորտի հմտություններ
Շարունակական ուսումնառության կարևորության գիտակցում

Աղբյուր՝ ուսումնասիրված մարզերի գործատուներ, 2019թ.

Այսպիսով, վերլուծությունից կարելի է հանգել հետևյալ դիտարկումներին. մարզերում աշխատատեղերի պակաս կա, թեև հիմնական խնդիրը ոչ թե զբաղվածության, այլ պատշաճ, մարզաբնակ երիտասարդների համար ցանկալի աշխատանքի բացակայությունն է: Աշխատանք գտնելու հիմնական խոչընդոտներն են՝ ցածր աշխատավարձը, աշխատանքային փորձի բացակայությունը, որակավորմանը համապատասխան աշխատատեղերի բացակայությունը, նաև երիտասարդների շրջանում հմտությունների պակասը:

Նախընտրելի զբաղմունքի տեսակը

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների վերլուծությունը նույնպես ցույց է տալիս, որ գործազուրկների մեծամասնությունը ցանկանում է աշխատել՝ անկախ զբաղվածության վայրից: Գործազուրկների մեծ մասը պատասխանել է, որ պատրաստ են աշխատել ցանկացած ոլորտում և ցանկացած կազմակերպության համար: Ոմանց հետաքրքրում է աշխատանքը պետական կառույցներում: Շատ քչերն են նշում, որ ցանկանում են ընտանեկան բիզնես գործարկել, մի քանիսն էլ նշել են, որ սեփական բիզնես են ուզում սկսել:

Բիզնես սկսելու մտադրությունը զգալիորեն ավելի մեծ է Գեղարքունիքում՝ մյուս երեք մարզերի համեմատ, որտեղ այս թիվը մոտ է զրոյին:
Տե՛ս ստորև Նկար 17.

Նկար 17. Որտե՞ղ և ո՞ւմ համար են ցանկանում աշխատել



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան 2017թ.

Շիրակում, Լոռիում, Տավուշում և Գեղարքունիքում կազմակերպված ֆոկուս խմբերի գրեթե բոլոր մասնակիցները նշել են, որ չեն դիտարկում սեփական բիզնես հիմնելու տարբերակը, որովհետև դրա մասին ոչինչ չգիտեն: Նրանք նշել են նաև ֆինանսական միջոցների բացակայությունը որպես բիզնես չստեղծելու պատճառներից մեկը:

Շիրակում մասնակիցներից մեկն ակտիվորեն սեփական բիզնեսի գաղափարով էր տարված, մեկ ուրիշը դիտարկում էր նման գաղափար, բայց սկսելու համար բավարար հմտություններ չուներ: Լոռիում և Տավուշում ոչ ոք նման տարբերակ չէր դիտարկում՝ վերը նշված պատճառնելից ելնելով: Գեղարքունիքում միայն մեկ հոգի նման ծրագրեր ուներ, բայց պատրաստվում էր անդրադառնալ դրան մասնագիտական առումով աճելուց հետո:

Ֆոկուս խմբերի մասնակիցներից մեկը՝ Գեղարքունիքի մարզից մի հաշվապահ, նշեց հետևյալը. «Ես մտածում եմ նոր բիզնես սկսելու մասին, բայց դա շուտ չի լինի, քանի որ չգիտեմ, թե որտեղից սկսեմ: Ես ձեռնարկատիրական հմտություններ չունեմ, ոչինչ չգիտեմ գործարար ոլորտի մասին»:

Չորս մարզերի և՛ գործատուները, և՛ գործազուրկները նշել են ձեռնարկատիրական և գործարար գիտելիքների և հմտությունների բացակայությունը որպես երիտասարդների համար հիմնական դժվարություն հանդիսացող հանգամանք

սեփական բիզնես սկսելու գործում: Գործում են ստարտափների աջակցության և կարճաժամկետ կրթական մի շարք ծրագրեր, բայց դրանք բավարար չեն անհրաժեշտ համակարգված փոփոխությունների և երիտասարդներին՝ սեփական բիզնես սկսելու ուղղությամբ մոտիվացնելու ու մարզերում ստարտափների զարգացումը խթանելու համար:

Թիրախային բոլոր մարզերում ընտանիք ունեցող մասնակիցների մեծամասնությունը ցանկանում էր աշխատանքի ընդունվել մարզերում, մարզկենտրոնում կամ հարակից գյուղերում: Չամուսնացած մասնակիցները հիմնականում գերադասում էին աշխատանք գտնել Երևանում, քանի որ այնտեղ ավելի շատ են հնարավորությունները, թեև բնակարանի վարձակալության վճարը նրանց համար խանգարող գործոն է: Մասնակիցների մեծամասնությունը գերադասում էր աշխատել իր մասնագիտական ոլորտում, բայց չէր հրաժարվում նաև աշխատանքի այլ հնարավորություններից: Երիտասարդ սերունդը ավելի խիստ պահանջներ է ներկայացնում աշխատավարձի և աշխատանքային պայմանների առումով, մինչդեռ ավելի տարեց մասնակիցները համաձայն էին ցանկացած աշխատանքի՝ իրենց մասնագիտության բնագավառում նվազագույն վարձատրությամբ:

Շիրակում հարցվողների մեծամասնությունը գերադասում էր մնալ մարզում: Նրանք, ովքեր նշել էին, թե աշխատանք են փնտրում միայն Երևանում, հիասթափված էին երկարատև գործազրկությունից և հովանավորչությունից, որին բախվել էին աշխատանք փնտրելիս: Նեղ մասնագիտացում ունեցող մասնակիցները նշում էին նաև, որ պատրաստ են տեղափոխվել Երևան, եթե նման հնարավորություն լինի: Շիրակում մասնակիցների մեծ մասը համաձայն էր աշխատել նվազագույն աշխատավարձով, և ընդամենը մի քանիսը, որ տեղյակ էին առցանց հարթակների մասին, ասացին, որ կարող են նույնքան կամ ավելի շատ վաստակել՝ աշխատելով առցանց:
Լոռիում ամուսնացած մասնակիցները նախընտրում էին մնալ և աշխատել Վանաձորում կամ հարակից գյուղերում, մինչդեռ չամուսնացած երիտասարդները նշում էին, որ գերադասում են աշխատել Երևանում: Լոռիում մասնակիցներից յուրաքանչյուրը պատրաստ էր աշխատանքի անցնել նվազագույն աշխատավարձով:
Տավուշում հարցվածների մեծամասնությունը գերադասում էր աշխատանք գտնել Իջևանում կամ հարակից համայնքներում՝ ընտանեկան պատճառներով, նաև Երևան տեղափոխվելու դեպքում բնակարան վարձակալելու անհրաժեշտության պատճառով:
Երիտասարդ մասնակիցները ցանկանում էին աշխատանք գտնել լավ աշխատանքային պայմաններով, համեմատաբար բարձր վարձատրությամբ, նաև աշխատավայրում մասնագիտական զարգացման հնարավորությամբ:
Մասնակիցներից մեկը գերադասում էր գործազուրկ մնալ, քանի որ դժգոհ էր նախորդ աշխատավայրում ստացած աշխատավարձից, որը նվազագույն աշխատավարձի

կրկնակին էր կազմում: Ընդհանուր առմամբ Տավուշում երիտասարդների պահանջներն ավելի մեծ էին, քան տարեց սերնդի ներկայացուցիչներինը, վերջիններս պարզապես ուզում էին աշխատանք գտնել: Տավուշում մասնակիցների մեծամասնության կարծիքով, նորմալ աշխատավարձը նվազագույն աշխատավարձի կրկնակին է կազմում:

Գեղարքունիքում բոլոր հարցվողները նույնպես ցանկանում էին աշխատանք գտնել իրենց մասնագիտական ոլորտում: Կին մասնակիցները նշել են, որ աշխատավարձի չափն իրենց համար կարևոր չէ, մինչդեռ տղամարդիկ նվազագույն աշխատավարձի կրկնակին կամ եռակին կազմող աշխատավարձ էին գերադասում: Բոլոր մասնակիցները ցանկանում էին աշխատանք գտնել Գեղարքունիքում՝ վերը նշված պատճառներից ելնելով:

Աշխատանքի պահանջարկ և առաջարկ՝ ըստ մասնագիտությունների

Ուսումնասիրված բոլոր մարզերում գործազուրկների մեծ մասը կրթություն է ստացել հումանիտար գիտությունների, տնտեսագիտության և կառավարման, կրթության կամ առողջապահության ոլորտներում (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.): Հումանիտար գիտությունների, տնտեսագիտության և կառավարման, կրթության կամ առողջապահության ոլորտներում մասնագիտացած մարդիկ մարզերում գործազուրկների ընդհանուր թվի 13-16% են կազմում, ուստի կարելի է ենթադրել, որ աշխատաշուկայում այս մասնագիտությունների պահանջարկ չկա, կամ մարդկանց որակավորումները կամ վարձատրության չափը անհամապատասխան են, կամ էլ գործազրկության այլ պատճառներ կան: Զգալի թիվ են կազմում նաև սպասարկման ոլորտի մասնագետ գործազուրկները: Բոլոր մարզերում Զբաղվածության պետական գործակալությունում գրանցված գործազուրկների կեսից ավելին մասնագիտություն չունի: Դրանից զատ, վերը նշված մարդկանց մեծամասնությունը միջնակարգ (այդ թվում մասնագիտական) կամ բարձրագույն կրթություն ունի: Տե՛ս ստորև Նկար 18:

Նկար 18. Գործազուրկներն ուսումնասիրված մարզերում ըստ մասնագիտությունների, 2018թ.



Աղբյուր՝ Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.

Շիրակը միակ մարզն է, որտեղ ցածր է գործազրկության մակարդակն առողջապահության ոլորտում, թեև հարցազրույցների ընթացքում մասնակիցները նշել են, որ լավ մասնագետ բժիշկների պակաս կա: Շիրակում համեմատաբար բարձր է գործազրկության մակարդակը մշակույթի, արվեստի, դիզայնի, թեթև արդյունաբերության, տրանսպորտային համակարգերի, մետալուրգիայի և մեքենաշինության ոլորտի մասնագետների շրջանում: Լոռիում նույնպես մեծ է գործազրկությունը մեքենաշինության, նյութերի արտադրության և մետալուրգիայի բնագավառի մասնագետների շրջանում: Տավուշում ավելի շատ են գործազուրկները տեխնոլոգիական սարքերի և սարքավորումների տեղափոխման ոլորտում: Ի վերջո, Գեղարքունիքում գործազրկության բարձր մակարդակ է նկատվել միայն վերը Նկար 18-ում նշված մասնագիտությունների գծով, բացի սպասարկման ոլորտից, որտեղ զբաղվածության մակարդակը բարձր է:[7]

Ուսանողներն ըստ մասնագիտությունների

Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերի՝ Հայաստանի խոշորագույն համալսարաններում ներկայում սովորող ուսանողների թվի վերաբերյալ տվյալներ են հավաքագրվել համալսարաններից՝ ուսումնասիրվող մարզերում մոտ ապագայում ակնկալվող աշխատուժի վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով (այն

[7] Յուրաքանչյուր մարզում գործազրկության թվերն ըստ զբաղմունքի տեսակների հասանելի են Հավելված 1-ում:

դեպքում, երբ Հայաստանի տարբեր համալսարաններում սովորող ուսանողները հետագայում հայրենի մարզ վերադառնան):

Արդյունքները ցույց են տալիս, որ մարզերի երիտասարդները շարունակում են հիմնականում նախապատվություն տալ հումանիտար գիտությունների, կրթության, տնտեսագիտության և կառավարման ոլորտի առարկաներին, որոնց պարագայում մեծ է գործազրկության մակարդակը և գրեթե բացայակում է պահանջարկը մարզային աշխատաշուկաներում: 12 համալսարաների,[8] , այդ թվում մարզային խոշորագույն համալսարանի ուսանողների ընդհանուր թվի մեծ մասը մասնագիտանում է հումանիտար գիտություններում (լեզուներ, ժուռնալիստիկա, իրավաբանություն, հոգեբանություն և միջազգային հարաբերություններ), տնտեսագիտության և կառավարման, մանկավարժության և կրթության, առողջապահության և սոցիալական աշխատանքի ոլորտներում, իսկ Շիրակում, Լոռիում և Գեղարքունիքում՝ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ոլորտներում: Թեև այս մասնագիտություններից մի քանիսի դեպքում աշխատաշուկայում փոքր պահանջարկ կա, հավանական է, որ աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը կշարունակվի: Հարկ է նշել, որ կրթության, հումանիտար առարկաների, տնտեսագիտության և կառավարման ոլորտում սովորող ուսանողների մեծ մասը տեղական բուհերից է: Յուրաքանչյուր մարզում զգալի է նաև սպասարկման, զբոսաշրջության և ագրոգիտությունների ոլորտում մասնագիտացող ուսանողների թիվը: Տե'ս ստորև Նկար 19:

Նկար 19. Հայաստանի 12 համալսարանների ուսանողներն ըստ մասնագիտությունների, 2019թ.[9]

[8] Համալսարանների ցանկը ներկայացված է Հավելված 5-ում:

[9] Յուրաքանչյուր մարզի ուսանողների բաշխվածությունն ըստ մասնագիտությունների ներկայացված է Հավելված 2-ի աղյուսակներում:



Աղբյուր՝ համալսարանների ցանկը ներկայացված է Հավելված 5-ում[10]

Մասնագիտության ընտրություն

Ֆոկուս խմբերում քննարկման արդյունքները բացահայտում են մարզերում երիտասարդների համար մասնագիտությունների նախընտրության հնարավոր պատճառը՝ ինչու են գործազուրկներն այդպիսի մասնագիտություններ ընտրում: Թիրախային մարզերի մասնակիցների մեծ մասը դժվարությամբ է մասնագիտական ուղի ընտրում, և նրանց ընտրության վրա մեծապես ազդում են ընտանիքն ու սոցիալական նորմերը: Ոչ ոք չի նշել, որ մասնագիտություն ընտրելիս ուսումնասիրել է շուկայական միտումները:

Շիրակում մասնակիցներն ընդունել են, որ համալսարանի տրամադրած գիտելիքն ու հմտությունները բավարար չեն, և աշխատանք գտնելու համար

[10] Սույն հետազոտության ընթացքում պարզվել է թիրախային մարզերից՝ Հայաստանի 12 բուհերում 2019թ. հունվարի 1-ի դրությամբ սովորող ուսանողների իրական թիվը (բակալավրիատ և մագիստրատուրա):

անհրաժեշտ է ինքնուսուցումը: Մասնակիցներից մեկը՝ տնտեսագետ, հայտնեց, որ պլանավորում է փոխել մասնագիտությունը. թեև այն նրան դուր է գալիս, շուկայում այն պահանջված չէ:

Լոռիում և Տավուշում մասնակիցների մեծամասնությունն ասել է, որ մասնագիտությունն ընտրել են, քանի որ հետաքրքրված էին դրանով, իսկ ոմանք նշել են, որ ընտրությունը պարտադրված է եղել իրենց ընտանիքների կողմից: Ոմանք մասնագիտություն են ընտրել պարզապես բարձրագույն կրթություն ունենալու համար:

Գեղարքունիքի բոլոր մասնակիցների խոսքերով, մասնագիտության ընտրությունը կատարվել է ընտանիքի ցանկությունների և սեփական նախընտրությունների համաձայն:

Տվյալների վերլուծության համաձայն, գործազուրկների մեծամասնությունը մասնագիտություն է ընտրում պատահաբար կամ ընտանիքի կամ սոցիալական նորմերի ճնշման ներքո: Տարածված է պարզապես ավելի լավ կրթություն ստանալու համար բուհ ընդունվելու սովորությունը: Գիտակցված, մտածված ընտրություն չի արձանագրվել: Ի վերջո, ներկա ուսանողների կողմից մասնագիտության ընտրությունը կարող է բացատրվել վերոհիշյալ պատճառներով՝ նրանք պարզապես ծանոթ չեն շուկային, պատշաճ որոնման հմտություն չունեն, ու մասնագիտություն են ընտրում զուտ ինտերցիայով:

Բոլոր մարզերում բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների շրջանում մասնագիտական զարգացման գործընթաց հազվադեպ է նկատվում: Բոլոր մարզերում մի քանի մասնակից է նշել մասնագիտական զարգացման դասընթացներին մասնակցելու մասին, մեծ մասն ասել է, որ զբաղվում է ինքնուսուցմամբ: Այդուհանդերձ, այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ մասնակիցների մեծամասնությունը պնդում է, թե ինքնազարգացմամբ է զբաղվում, որպեսզի մյուսներից չտարբերվի, մինչդեռ իրականում կրթական հաստատությունն ավարտելուց հետո ոչ մի մասնագիտական զարգացում տեղի չի ունենում:

Վերապատրաստման դասընթացները հիմնականում անցկացվել են Շիրակում, որոշ չափով՝ Լոռիում: Տավուշում մարդիկ առանձնապես չէին հավատում, թե մասնագիտական զարգացումը կարող է օգնել ավելի լավ աշխատանք գտնելու հարցում. տասը մասնակիցներից միայն երկուսը նշեցին մասնագիտական զարգացման գործընթացում ներգրավման մասին: Մասնագիտական զարգացմանը հետամուտ չլինելու պատճառը դասընթացների անարդյունավետությունն էր: Գեղարքունիքում վեց մասնակիցներից ընդամենը մեկն ասաց, որ մասնագիտական զարգացման դասընթացների է մասնակցել:

Զբաղվածություն

Գործազրկության վիճակագրությունից և ոլորտի խոչընդոտներից զատ, սույն հետազոտությունն ուսումնասիրել է զբաղվածությունը մարզերում՝ մարզերում աշխատուժի բաշխվածությունը հասկանալու և աշխատանքի պահանջարկը չափելու նպատակով: Ուսումնասիրված բոլոր մարզերում զբաղվածներն աշխատուժի մոտավորապես 50 տոկոսն են կազմում: Ուսումնասիրված մարզերի զբաղվածների 40%-60%-ը ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում են: Ոչ ֆորմալ զբաղված մարդկանց ամենամեծ թիվը Տավուշում է, իսկ ամենափոքրը՝ Գեղարքունիքում: Տե՛ս ստորև Նկար 20:

Ոչ ֆորմալ զբաղվածություն

Շիրակ՝ 42,000 մարդ, աշխատուժի 42%

Լոռի՝ 49,600 մարդ, աշխատուժի 45%

Տավուշ՝ 33,400 մարդ, աշխատուժի 59%

Գեղարքունիք՝ 55,400 մարդ, աշխատուժի 37%

Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2018թ.

Նկար 20. Զբաղվածությունը մարզերում, աշխատուժի %, 2017թ.



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2018թ.

Զբաղվածությունն ըստ մասնագիտությունների

Ուսումնասիրված բոլոր մարզերում զբաղված մարդկանց մեծամասնությունն աշխատում է գյուղատնտեսության ոլորտում և իրեն գյուղատնտեսական ոլորտի որակավորված աշխատող է համարում (հիմնականում ինքնազբաղված), այնուհետև հաջորդում են համեմատաբար մեծ թիվ կազմող սպասարկման և վաճառքի ոլորտի աշխատողները և բարձր որակավորման մասնագետները (ուսուցիչները): Ավելի փոքր թիվ են կազմում ոչ գյուղատնտեսական ոլորտի որակավորված աշխատողները, միջին որակավորման մասնագետները, որակավորում չունեցող աշխատողները,

օպերատորները, ապարատավարները, մեքենավարները, փականագործները, գրասենյակների ծառայողները և օրենսդիր, գործադիր, դատական, ՏԻՄ, կազմակերպությունների, քաղաքական և հասարակական միավորումների ղեկավարները: Մարզերի միջև փոքր տարբերություններ կան. Շիրակում և Լոռիում զբաղվածների գրեթե կեսն աշխատում է գյուղատնտեսության ոլորտում, իսկ Տավուշում և Գեղարքունիքում զբաղվածների ընդամենը մեկ երրորդն է աշխատում գյուղատնտեսության բնագավառում, բարձր է նաև սպասարկման և վաճառքի ոլորտների աշխատակիցների թիվը: Տե՛ս ստորև Նկար 21:

Նկար 21. Զբաղվածությունն ըստ մասնագիտությունների ուսումնասիրված մարզերում, 2017թ.



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան, 2017թ.

Գրեթե բոլոր ոլորտներում երիտասարդների թիվն ավելի քիչ է, քան միջին տարիքի զբաղվածների թիվը: Գենդերային ճեղքվածքի առումով հաստատվում են նախորդ ուսումնասիրությունների արդյունքներն առ այն, որ ղեկավար պաշտոններում կանանց թիվը փոքր է. բոլոր մարզերում օրենսդիր, գործադիր, դատական, ՏԻՄ և այլ մարմինների ղեկավարների թվում կանայք ընդամենը մեկ երրորդն են կազմում: Օպերատորները, ապարատավարները, մեքենավարները և փականագործները միայն տղամարդիկ են: Գրասենյակների ծառայողների, միջին որակավորման մասնագետների և բարձր որակավորման մասնագետների մեծամասնությունը կանայք են: Լոռիում և Տավուշում մյուս բոլոր մասնագիտություններում կանանց և տղամարդկանց բաշխվածությունը գրեթե հավասար է: Շիրակում և Գեղարքունիքում ոչ գյուղատնտեսական ոլորտի որակավորված աշխատողները, սպասարկման և վաճառքի ոլորտի մասնագետները տղամարդիկ են:[11]

Գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնորսության ոլորտներում զբաղվածների մասնաբաժինը 2017թ.

Շիրակ՝ 52%

Լոռի՝ 47%

Տավուշ՝ 33%

Գեղարքունիք՝ 38%

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, աշխատուժի շտեմարան, 2017թ.

Այս վերլուծությունը պարզաբանում է նաև մարզային քաղաքներում գործազրկության բարձր մակարդակը. գյուղական բնակավայրերում մարդիկ հիմնականում ապրուստ են վաստակում գյուղատնտեսության ոլորտում, իսկ քաղաքներում գերակշռում է գործազրկությունը:

Զբաղվածության կարգավիճակ

Լոռիում զբաղվածների կեսն աշխատում է պաշտոնական գրավոր պայմանագրի հիման վրա, Շիրակում նրանց թիվը կազմում է 39%: Տավուշում և Գեղարքունիքում պայմանագիր ունեցող աշխատողների թիվը 30 տոկոսից ցածր է՝ մարզի ընդհանուր թվի համեմատ: Այս իրավիճակը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Տավուշում և Գեղարքունիքում հարցվածների մեծամասնությունը ֆերմաներում ինքնազբաղվածներն են, որտեղ զբաղվածությունը հիմնականում ոչ ֆորմալ է: Ընդհանուր առմամբ ինքնազբաղվածները զբաղվածների մեծ մասն են կազմում

[11] Թվերն ըստ սեռի յուրաքանչյուր մարզի համար հասանելի են Հավելված 3-ում

ուսումնասիրված բոլոր մարզերում, բացի Լոռիից, որտեղ առանց պայմանագրի աշխատողների թիվը համեմատաբար ավելի մեծ է, քան մյուս մարզերում: Տե՛ս ստորև Նկար 22:

Նկար 22. Զբաղվածության կարգավիճակն ուսումնասիրված մարզերում, 2017թ.



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան, 2017թ.

Աշխատավարձ

Միջին ամսական աշխատավարձ (դրամ)

Շիրակ՝ 127,369 դրամ

Լոռի՝ 148,896 դրամ

Տավուշ՝ 143,080 դրամ

Գեղարքունիք՝ 116,736 դրամ

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2018թ.

Շիրակում և Տավուշում զբաղվածների մեծամասնությունը պատասխանել է, որ ցանկանում է փոխել իր զբաղվածության կարգավիճակը, մինչդեռ Լոռիում և Գեղարքունիքում զբաղվածների մեծ մասը նման ցանկություն չի հայտնել: Ուսումնասիրված բոլոր մարզերում զբաղվածության կարգավիճակը փոխելու ցանկություն հայտնած զբաղվածների կողմից նշվող հիմնական պատճառն ավելի բարձր եկամուտ ստանալն էր: Լոռիում ոմանք ասել են, որ ցանկանում են փոխել աշխատանքը հանուն մասնագիտական զարգացման, իսկ Շիրակում ոմանք դժգոհ էին աշխատանքային պայմաններից: Շատ քիչ մարդ է այլ պատճառներ նշել, օրինակ, աշխատավայրում կրճատումները կամ ընկերության փակումը, ընտանեկան հանգամանքները, առողջական խնդիրները կամ աշխատանքի ժամանակավոր բնույթը: Այսպիսով, ցածր աշխատավարձը մարզերում հիմնական խնդիրներից է՝ և՛ զբաղվածների, և՛ աշխատանք փնտրող գործազուրկների շրջանում: Տե՛ս ստորև Նկար 23 և 24:

Նկար 23. Զբաղվածության կարգավիճակի փոփոխություն



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան, 2017թ.

Նկար 24. Զբաղվածության փոփոխության պատճառները



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատուժի տվյալների շտեմարան, 2017թ.

Ստացված արդյունքների համաձայն, բոլոր մարզերում զբաղվածների մեծամասնությունը նվազագույն աշխատավարձը 2-ից 3 անգամ գերազանցող գումար է վաստակում, ինչն ավելի քիչ է, քան ամսական 170000 դրամ համախառն աշխատավարձը: Մեկ քառորդը նվազագույն աշխատավարձ է ստանում, շատ քչերն են նվազագույն աշխատավարձը 4-ից 6 անգամ գերազանցող գումար վաստակում: Բոլոր մարզերում ոմանք նվազագույն աշխատավարձից պակաս գումար են ստանում, և այս մարդկանց տոկոսային հարաբերակցությունն ավելի բարձր է Շիրակում և Գեղարքունիքում, որտեղ ավելի տարածված է հովանավորչությունն ու ծանոթությամբ աշխատանքի տեղավորելը: Տե՛ս ստորև Նկար 25:

Նկար 25. Ամսական համախառն աշխատավարձն ուսումնասիրված մարզերում, 2017թ.



Աղբյուր՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2018թ.

Աշխատանքի պահանջարկն ըստ շուկայի ոլորտների

2018թ. սկզբին մարզերում թափուր և համալրված աշխատատեղերի վերաբերյալ Զբաղվածության պետական գործակալության տրամադրած տվյալների վերլուծության համաձայն, աշխատանքի պահանջարկ է արձանագրվել մշակող արդյունաբերության, մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման ու սպասարկման ոլորտներում: Դրանց հաջորդում են կրթության, առողջապահության, պետական կառավարման և պաշտպանության ոլորտները՝ ուսումնասիրված բոլոր մարզերում: Շատ ցածր է պահանջարկը շինարարության, փոխադրումների և պահեստային տնտեսության, ֆինանսական և ապահովագրական գործունեության, մշակույթի, զվարճությունների և հանգստի, գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության, տեղեկատվության և կապի ոլորտներում: Գրեթե բացակայում է աշխատանքի պահանջարկը մասնագիտական, գիտական և տեխնիկական, նաև վարչարարական և օժանդակ գործունեության ոլորտներում (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.):[12]

Նկար 26. Մարզերում թափուր/համալրված աշխատատեղերը 2018թ.[13]

[12] Զբաղվածության պետական գործակալությունը ներկայացնում է միայն ֆորմալ զբաղվածության արդյունքները:
[13] Յուրաքանչյուր մարզում ըստ շուկայի ոլորտների թափուր/համալրված աշխատատեղերի վերաբերյալ թվերը հասանելի են Հավելված 4-ում:



Աղբյուր՝ Հայաստանի Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.

Մարզում գործազուրկների ընդհանուր թվի %

	Համալրված	Թափուր
Շիրակ	4%	2%
Լոռի	8%	4%
Տավուշ	11%	8%
Գեղարքունիք	14%	5%

Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.

Շիրակում աշխատանքի ամենամեծ պահանջարկը գրանցվել է մշակող արդյունաբերության ոլորտում, դրան հաջորդում է սպասարկման, այդ թվում՝ կացության և սննդի ոլորտը, մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման, կրթության, առողջապահության և սոցիալական սպասարկման, պետական կառավարման և պաշտպանության ոլորտները: Նկատելի է մշակող արդյունաբերության, մեծածախ և մանրածախ առևտրի և սպասարկման ոլորտների զարգացումը (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.): Լոռիում աշխատանքի ամենամեծ պահանջարկը նկատվել է մեծածախ և մանրածախ առևտրի, այնուհետև ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման, մշակող արդյունաբերության, սպասարկման այլ ծառայությունների, կրթության, կացության և հանրային սննդի կազմակերպման, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման, պետական կառավարման և պաշտպանության ոլորտներում: Զարգացման միտումներ են նկատվել, այլոց թվում, կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտում (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.): Տավուշում աշխատանքի ամենամեծ պահանջարկը մեծածախ և մանրածախ առևտրի, այնուհետև ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման, մշակող արդյունաբերության,

սպասարկման այլ ծառայությունների, կացության և հանրային սննդի կազմակերպման, կրթության, գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման և այլ ոլորտներում է գրանցվել: Զգալիորեն զարգացել են կացության և հանրային սննդի կազմակերպման, սպասարկման այլ ծառայությունների, գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտները: Որոշակի զարգացման միտումներ կան նաև մեծածախ և մանրածախ առևտրի և մշակող արդյունաբերության ոլորտներում (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.): Գեղարքունիքում աշխատանքի ամենամեծ պահանջարկը մեծածախ և մանրածախ առևտրի, այնուհետև ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման, սպասարկման այլ ծառայությունների, կրթության, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման, շինարարության և մշակող արդյունաբերության ոլորտներում է գրանցվել (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.): 2017թ. համեմատ 2018թ. աշխատաշուկայում զարգացում է նկատվել մեծածախ և մանրածախ առևտրի, նաև ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման ոլորտներում, դանդաղ զարգացում կա նաև առողջապահության և կրթության ոլորտներում (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.):[14]

Ինչպես նշվել է վերը, շուկայի որոշակի ոլորտներում աշխատանքի պահանջարկ կա: Այնուամենայնիվ, աշխատանքի առաջարկը զգալիորեն գերազանցում է պահանջարկը: Ոլորտներում առկա թափուր աշխատատեղերն ուսումնասիրված բոլոր մարզերում գործազուրկների ընդհանուր թվի ընդամենը 2-5% են կազմում:

Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տվյալների համաձայն, ուսումնասիրված բոլոր մարզերում գործող կազմակերպությունների ամենամեծ թիվը մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման, ինչպես նաև մշակող արդյունաբերության, կացության և հանրային սննդի կազմակերպման և սպասարկման այլ ծառայությունների ոլորտներում է: Այլ ոլորտներում արձանագրված թվերը փոքր են: [15] Տե՛ս ստորև Նկար 27:

Նկար 27. Ուսումնասիրված մարզերում գործող կազմակերպությունները, 2019թ.

[14] Յուրաքանչյուր մարզում առկա թափուր/համալրված աշխատատեղերի վերաբերյալ թվերը հասանելի են Հավելված 4-ում:

[15] Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տվյալները ներկայացնում են միայն ֆորմալ զբաղվածությունը:



Աղբյուր՝ Հայաստանի պետական եկամուտների կոմիտե, 2019թ.

Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տվյալների համաձայն, 2019թ. աշխատատեղերի ամենամեծ թիվը նկատվել է կրթության ոլորտում Շիրակում և Լոռիում, իսկ Տավուշում և Գեղարքունիքում՝ մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման ոլորտներում: Ընդհանուր առմամբ աշխատատեղերի համեմատաբար մեծ թիվ է գրանցվել նաև առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման, կացության և հանրային սննդի կազմակերպման, սպասարկման այլ ծառայությունների և մշակող արդյունաբերության ոլորտներում ուսումնասիրված բոլոր մարզերում: Այլ ոլորտներում արձանագրված թվերը փոքր են:[16] Տե՛ս ստորև Նկար 28:

Նկար 28. Ակտիվ աշխատատեղերն ուսումնասիրված մարզերում, 2019թ.

[16] Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տվյալները ներկայացնում են միայն ֆորմալ զբաղվածությունը:



Աղբյուր՝ Հայաստանի պետական եկամուտների կոմիտե, 2019թ.

Կազմակերպությունների տեսակների վերլուծությունը հետևյալ արդյունքներն է բացահայտում. կրթության, պետական կառավարման, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտների գրեթե բոլոր կազմակերպությունները պետական կառավարման մարմիններն են ներկայացնում, իսկ տնտեսության մեջ գործող անհատ ձեռներեցները մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման, նաև մշակող արդյունաբերության, կացության և հանրային սննդի կազմակերպման և սպասարկման այլ ծառայությունների ոլորտներում են (Պետական եկամուտների կոմիտե, 2019թ.):

Վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ գյուղատնտեսությունը, մեծածախ և մանրածախ առևտուրը, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգումը, մշակող արդյունաբերությունը, կացության և հանրային սննդի կազմակերպումը և սպասարկման այլ ծառայությունները զարգացող շուկաներ են մարզերում, որտեղ համեմատաբար բարձր է աշխատուժի պահանջարկը: Գյուղատնտեսության ոլորտում աշխատանքը հիմնականում ոչ ֆորմալ է, զբաղվածությունը խոցելի է, քանի որ այս

ոլորտում զբաղվածների մեծամասնությունն ինքնազբաղված է, ինչը ենթադրում է, որ աշխատանքը ժամանակավոր բնույթ է կրում, ու սոցիալական ապահովության որևէ միջոց երաշխավորված չէ: Վերը նշված մնացած ոլորտներում ֆորմալ զբաղվածության մակարդակն ավելի բարձր է:

Այսպիսով, աշխատանքի շուկաների վերլուծությունն ըստ ոլորտների իրականացվել է Զբաղվածության պետական գործակալության և Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տվյալների վերլուծության և այս հետազոտության ընթացքում ստացված որակական տվյալների համադրությամբ:

Զարգացող աշխատաշուկաներ և առկա բացեր

Մշակող արդյունաբերություն. Վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրված բոլոր մարզերում մշակող արդյունաբերության ոլորտում համեմատաբար ավելի մեծ է աշխատանքի պահանջարկը: 2017-2018թթ. այս ոլորտը զարգանում էր, ավելի շատ մարդիկ են ներգրավվում այստեղ, ավելի շատ են թափուր աշխատատեղեր հայտնվում Շիրակում, Տավուշում և Գեղարքունիքում: Լոռու մարզում այս ոլորտում որևէ լուրջ զարգացում չի արձանագրվել (Զբաղվածության պետական գործակալության, 2018թ.): Բոլոր մարզերում այս ոլորտում ավելի քան 100 ընկերություն է գործում: Բոլոր մարզերում ընդհանուր առմամբ 400-800 մարդ է զբաղված այս ոլորտում: 2019թ. այս ոլորտում նախատեսվում է ներդրումային ծրագրեր իրականացնել: Տե՛ս ստորև Աղյուսակ 3:

Աղյուսակ 3. Ուսումնասիրված մարզերում 2019թ. ակնկալվող ներդրումային ծրագրերը

Մարզ	Ներդրումային ծրագրեր	Ստեղծվող աշխատատեղերի թիվը	Տեղեկատվության աղբյուր
Շիրակ	Հագուստի ֆաբրիկա	14 աշխատատեղ	Էկոնոմիկայի նախարարություն
	Ձեռնոցներ արտադրող ընկերություն	30 աշխատատեղ	Էկոնոմիկայի նախարարություն
Լոռի	Ներդրումների վերաբերյալ տեղեկատվություն չկա		Էկոնոմիկայի նախարարություն
Տավուշ	Բանվորական ձեռնոցներ արտադրող ընկերություն	300 աշխատատեղ	Էկոնոմիկայի նախարարություն

	Արդյունաբերական ֆիլտրեր և ֆիլտրերի տարբեր արտադրող ընկերություն	20 աշխատատեղ	Էկոնոմիկայի նախարարություն
	Տեքստիլի գործարան սահմանամերձ գյուղում	-	Մարզպետարան
Գեղարքունիք	Ներդրումների վերաբերյալ տեղեկատվություն չկա	-	Էկոնոմիկայի նախարարություն

Այդուհանդերձ, չնայած մշակող արդյունաբերության ոլորտում առկա աշխատանքի առաջարկին և պահանջարկին, որևէ զգալի փոփոխություններ չեն նկատվել Զբաղվածության պետական գործակալության այն գործազուրկների ցանկում, ովքեր մասնագիտացած են մշակող արդյունաբերությանն առնչվող ուսումնասիրվող բնագավառներում, ներառյալ թեթև արդյունաբերությունը, մեքենաները, սարքավորումները, տեղափոխումները (այդ թվում՝ նորոգումը), կառավարումն ու տնտեսագիտությունը (Զբաղվածության պետական գործակալության, 2018թ.):

Շիրակ

Տեքստիլ, սնունդ, խմիչք, կահույք, կաշվե արտադրանք

Լոռի

Սնունդ, խմիչք, հագուստ, մեքենաշինություն

Տավուշ

Տեքստիլ, բետոն, պանրի արտադրություն, կաշվե արտադրանք

Գեղարքունիք

Խմիչք, հագուստ, հրուշակեղենի արտադրություն

Թեև բոլոր մարզերում զարգանում է մշակող արդյունաբերության ոլորտը, առկա են որոշակի մարտահրավերներ: Ուսումնասիրված բոլոր մարզերում գործատուները նշել են աշխատակիցների հավաքագրման դժվարությունը, հիմնականում երիտասարդների՝ մշակող արդյունաբերության ոլորտում աշխատելու մոտիվացիայի պակասը՝ առաջարկվող ծանր և ցածր վարձատրվող աշխատանքի պատճառով:

Գյումրիում տեքստիլ արտադրող ընկերության ղեկավարը նշել է հետևյալը. «Ոչ ոք չի ուզում Գյումրիում տեքստիլի արտադրություն սկսել, քանի որ աշխատանքը դժվար է, իսկ աշխատավարձը՝ համեմատաբար ցածր: Երիտասարդները նախընտրում են գործազուրկ մնալ, SS սովորել և ավելի շատ վաստակել, կամ արտերկրում ապրող բարեկաներին խնդրել փող ուղարկել, բայց տեքստիլի գործարանում չաշխատել»:

Նշվել է երիտասարդների շրջանում տարբեր մասնագիտությունների գծով հմտությունների բացակայությունը, ներառյալ տնտեսագիտությունը, հաշվապահությունը, կառավարումը, գյուղատնտեսությունն ու անասնապահությունը:

Դիլիջանում պանրի արտադրամասի ղեկավարը հետևյալն է ասել. «Մենք փնտրում էինք անասնաբույժ, խոստանում էինք վճարել նրա հնգամյա կրթության համար, եթե համաձայներ մեզ հետ անընդմեջ հինգ տարի աշխատել: Ոչ մեկին չկարողացանք գտնել: Պատճառն այն է, որ Ագրարային համալսարանում այժմ սովորող ուսանողներն իրենց կամքով չեն ընտրել այդ մասնագիտությունը: Նրանք պարզապես դուրս են մնացել այլ համալսարաններից, ուստի չեն ցանկանում այդ մասնագիտությամբ աշխատել»:

Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում. Վերլուծությունը ցույց է տալիս, որ այս ոլորտում համեմատաբար ավելի մեծ է աշխատանքի պահանջարկը. այն զարգանում է, ավելի շատ մարդիկ են աշխատանքի անցնում, ավելի շատ են թափուր աշխատատեղեր հայտնվում Շիրակում, Տավուշում և Գեղարքունիքում: Լոռու մարզում այս ոլորտում ևս որևէ լուրջ զարգացում չի արձանագրվել (Զբաղվածության պետական գործակալության, 2018թ.): Ուսումնասիրված բոլոր մարզերում այս ոլորտում 300-500 ընկերություն է գործում: Ոլորտում զարգանում է ձեռնարկատիրությունը, ընկերությունների երկու երրորդը անհատ ձեռներեցների է պատկանում (Պետական եկամուտների կոմիտե, 2019թ.): Ընկերությունների մեծ մասը մանրածախ առևտրի խանութներ են, ավտոլվացման կետեր և ավտոմեքենաների նորոգման սրահներ (Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, 2017թ.): Տվյալների համաձայն, ընկերությունների մեծ մասը փոքր ձեռնարկություն է հանդիսանում, յուրաքանչյուրում մի քանի աշխատակից կա: Բոլոր մարզերում այս ոլորտում ավելի քան 1300 մարդ է աշխատում (Պետական եկամուտների կոմիտե, 2019թ.): Այդուհանդերձ, չնայած այս ոլորտում առկա աշխատանքի առաջարկին և պահանջարկին, որևէ զգալի փոփոխություններ չեն նկատվել Զբաղվածության պետական գործակալության՝ փոխադրումների համակարգերի (ներառյալ նորոգումը), մեքենաշինության, կառավարման ու տնտեսագիտության բնագավառներում մասնագիտացած գործազուրկների ցանկում (Զբաղվածության պետական գործակալության, 2018թ.):

Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն: Բոլոր մարզերում գյուղատնտեսական ոլորտի զարգացումը ռազմավարական զարգացման նպատակ է

հոչակված: Հողագործությունն ու անասնապահությունը որոշ չափով զարգացած բնագավառներ են և զարգացման ավելի մեծ ներուժ ունեն: Շիրակում և Լոռիում զբաղվածների կեսն այս ոլորտում է աշխատում, հիմնականում ոչ ֆորմալ կերպով: Տավուշում և Գեղարքունիքում աշխատանքի մինչև 40 տոկոսն այս ոլորտում է կենտրոնացած: Այս ոլորտում աշխատողների մեծամասնությունը ֆերմաներում ինքնազբաղվածներ են: Այսպիսով, տվյալ ոլորտում մեծ է աշխատանքի պահանջարկը, բայց խոցելի զբաղվածության պատճառով շատ անելիք կա ոլորտի զարգացումը խթանելու ուղղությամբ:

Կրթություն. Կրթությունն այն ոլորտն է, որտեղ բոլոր մարզերում մեծ է համալրված աշխատատեղերի թիվը և քիչ են թափուր հաստիքները: Շիրակում (73%), Լոռիում (97%), Տավուշում (85%) և Գեղարքունիքում (72%) կրթության ոլորտում ակտիվ կազմակերպությունները հիմնականում պետական կառավարման մարմիններ կամ հանրային կրթական հաստատություններ են ներկայացնում, որոնք կրթություն են ապահովում տեղի/մարզային բնակչությանը և շուկայական փոփոխությունների ազդեցությանն ուղղակիորեն չեն ենթարկվում (Պետական եկամուտների կոմիտե, 2019թ.): Սա նշանակում է, որ այս ոլորտում աշխատատեղերի մեծ թիվը չի փոխվի, եթե սպասարկվող բնակչությունը չավելանա, ինչը հավանական չէ՝ ընթացիկ միտումներից ելնելով, և այդ թվերը չեն արտացոլում կրթական ոլորտի մասնագետների առկա շուկայական պահանջը: Թեև այս ոլորտում մասնագետների գերառաջարկ կա, գործազուրկների թիվը վկայում է առաջարկի և պահանջարկի միջև դեռևս առկա անհամապատասխանության մասին՝ որակավորման, վարձատրության ակնկալիքների և այլ գործոնների առումով:

Ֆոկուս խմբի մասնակիցները գործազուրկ ուսուցիչներին խանգարող գործոնների շարքում նշել են ենթակառուցվածքների բացակայությունը և թափուր հաստիք ունեցող հեռավոր համայնքներ տանող տրանսպորտի բացակայությունը կամ անբավարար աշխատանքը:

Երիտասարդների կողմից մանտանշված մնացած երկու գործոններն են Հայաստանի պետական ոլորտում առկա համեմատաբար ցածր աշխատավարձերն ու հովանավորչությունը:

Կացություն և հանրային սննդի կազմակերպում, սպասարկման այլ ծառայություններ. Տվյալների համաձայն, այս ոլորտը շարունակում է զարգանալ, թիրախային բոլոր մարզերում 2017թ.-ի համեմատ 2018թ.-ին ավելի շատ թափուր հաստիքներ են հայտնվել և համալրվել (Զբաղվածության պետական գործակալության, 2018թ.): Այս ոլորտում

զարգացման ամենաբարձր մակարդակն արձանագրվել է Տավուշում, որտեղ 2017թ.-ի համեմատ 2018թ.-ին երեք անգամ աճել է թափուր և համալրված աշխատատեղերի թիվը: Այս ոլորտում գործող կազմակերպությունների թիվը մեծությամբ երրորդ տեղում է բոլոր ոլորտների (85) շարքում, զբաղված մարդկանց մեծ թվով (704) հանդերձ (Զբաղվածության պետական գործակալության, 2018թ.):[17] Շիրակում սպասարկման ոլորտում ավելի քան 100 կազմակերպություն է գործում: Սա այնպիսի ոլորտ է, որտեղ ձեռնարկատիրությունը երրորդ տեղում է՝ մեծածախ և մանրածախ առևտրից և մշակող արդյունաբերությունից հետո (Պետական եկամուտների կոմիտե, 2019թ.):[18] Լոռիում շատ չեն այս ոլորտում գործող ընկերությունները, դրանց մեծ մասը բիզնեսներ են (75), որտեղ համեմատաբար մեծ է հաստատուն աշխատատեղերի թիվը (1274): Տվյալ ոլորտի ամենադանդաղ զարգացումն արձանագրվել է Գեղարքունիքում, թեև ոլորտում գործող կազմակերպությունները մարզում բոլոր ոլորտների շարքում երրորդ տեղն են զբաղեցնում (Պետական եկամուտների կոմիտե, 2019թ.): Այդուհանդերձ, չնայած այս ոլորտում առկա աշխատանքի առաջարկին և պահանջարկին, Զբաղվածության պետական գործակալության՝ սպասարկման ոլորտում մասնագիտացած գործազուրկների ցանկում որևէ զգալի փոփոխություններ չեն նկատվել (Զբաղվածության պետական գործակալության, 2018թ.):

Վիճակագրական և որակական արդյունքներից ելնելով՝ ակնհայտ է, որ ուսումնասիրված բոլոր մարզերում սպասարկման ոլորտը զարգացման ներուժ ունի: Այդուհանդերձ, տվյալ ոլորտի, այդ թվում զբոսաշրջության աշխատաշուկայում առկա է առաջարկի և պահանջարկի անհամապատասխանություն մասնագետների որակավորման տեսանկյունից: Տվյալ ոլորտի հարցված բոլոր գործատուները որպես հիմնական խնդիր նշում են տեղում մասնագետների պակասը: Շիրակում և Լոռիում գործատուները նշել են, որ ոլորտի շրջանավարտներն անհրաժեշտ հմտություններին չեն տիրապետում, և նրանց որակավորումը բավարար չէ: Տավուշում գործատուն հայտնում է, որ մի քանի լեզվի տիրապետող ղեկավար, ադմինիստրատոր և լավ հաշվապահ դժվար է գտնել: Դժվար է նույնիսկ բարմեններ և մատուցողներ գրավելը, թեև ներկայում դրական զարգացում է նկատվում: Գեղարքունիքում գործատուները նշել էին սեզոնայնությունը որպես մասնագետ գտնելու և պահելու գործընթացին խոչընդոտող հանգամանք: Գործատուների համար դժվար է գտնել որակավորված մարդկային ռեսուրսների, մարքետինգի մասնագետ, նաև ադմինիստրատոր:

[17] Նոր, մեծ հանգստի գոտի է կառուցվում Տավուշի Հովք համայնքում:

[18] Երկու նոր ծրագիր է մշակվում. դահուկային հանգստի վայր Արագած լեռան մոտակայքում և Անիի ավերակների այցելության ծառայություն:

Գործատուների կարծիքով, տեղական համալսարանների զբոսաշրջության և սպասարկման ֆակուլտետների շրջանավարտները ոչինչ չգիտեն ոլորտի մասին: Սևանում հանգստի գոտու ղեկավարներից մեկը հետևյալն է ասել. «Հիմա շրջանավարտների մակարդակը շատ ցածր է, նրանք նույնիսկ հյուրանոցների կառավարման ծրագրերից տեղյակ չեն»:

Հնացած կրթական համակարգի պատճառով երիտասարդների շրջանում որոշակի հմտությունների և գիտելիքների պակասը բոլոր չորս մարզերում նշվել է որպես գործազրկության հիմնական պատճառ: Ծառայություն մատուցող բոլոր ընկերությունները նշել են, որ դիմորդները հաղորդակցման հմտություններ չունեն և չգիտեն, թե ինչպես պետք է խոսել և շփվել հաճախորդների հետ: Շիրակում գործատուներից մեկը կոնֆլիկտների կառավարումը որպես կարևոր հմտություն էր նշել, որին պետք է տիրապետեն ծառայություն մատուցող ընկերությունների աշխատակիցները: Լոռիում և Գեղարքունիքում գործատուները նշել են, որ համակարգչային բազային գիտելիքների և օտար լեզուների իմացության պակասը լուրջ խնդիր է աշխատանք փնտրողների շրջանում:

Տեղեկատվություն և կապ. Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի զարգացումը ռազմավարական զարգացման նպատակ է հռչակվել և' Շիրակում, և' Լոռիում: Այս ոլորտը զարգացած չէ Տավուշում և Գեղարքունիքում, որտեղ գրեթե բացակայում են ՏՏ առաջարկի և պահանջարկի աշխատանքի շուկաները: Ոլորտի զարգացման նպատակով Շիրակում և Լոռիում տեխնոլոգիական կենտրոններ են բացվել (Գյումրու տեխնոլոգիական կենտրոն, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոն): Երկու տեխնոլոգիական կենտրոնների և մարզպետարանների ներկայացուցիչները նշել են, որ վերջին մի քանի տարիների ընթացքում այս ոլորտում աճ է գրանցվել, և այն մարդկային ռեսուրսների առումով զարգացման մեծ ներուժ ունի: Նրանք ընդգծել են այն կարևոր միջնորդ դերը, որ կարող են ունենալ տեխնոլոգիական կենտրոնները: Հաղորդվել է նաև Լոռիում աշակերտների շրջանում առկա մեծ հետաքրքրության մասին: Այնուամենայնիվ, 2019թ. ոլորտում գործող ընկերությունները դեռ համեմատաբար քիչ են (Շիրակում՝ 23, Լոռիում՝ 20) (Պետական եկամուտների կոմիտե, 2019թ.): Այդուհանդերձ, բոլոր կողմերը միակարծիք էին, որ ՏՏ որակավորված մասնագետները շարունակաբար մարզերից Երևան են տեղափոխվում՝ մայրաքաղաքում առաջարկվող ավելի բարձր աշխատավարձերի և աշխատանքի ավելի մեծ հնարավորությունների, նաև երիտասարդների շրջանում տեղում սեփական ՏՏ բիզնես հիմնելու համար անհրաժեշտ ձեռնարկատիրական հմտությունների բացակայության պատճառով: Շիրակում Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի

ղեկավարը պատմեց տեղական ընկերություններում փորձառու մասնագետներին գրավելու և պահելու դժվարությունների մասին: Նա ասաց. «Խնդիրը ոչ թե մասնագետ, այլ *լավ* մասնագետ գտնելն է»:

Լոռիում Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի ղեկավարը նշել է, որ և' կրտսեր, և' բարձր մակարդակի մասնագետների արտահոսք կա դեպի Երևան: Քանի որ Գյումրիում և Վանաձորում ՏՏ ընկերությունների թիվը փոքր է, Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների դասընթացների շրջանավարտների մեծամասնությունը մեկնում է Երևան: Երկու կենտրոնների ղեկավարներն էլ նշեցին, որ ոլորտի զարգացման հիմնական դժվարությունը տեղերում լավ մասնագետներ գտնելը կամ պահելն է: ՏՏ ստարտափները դժվար են զարգանում, քանի որ երիտասարդներն անհրաժեշտ գործարար հմտություններ ու գիտելիք չունեն, իսկ համալսարաններում նրանց տարրական ձեռնարկատիրական հմտություններ չեն սովորեցնում:
Այնուամենայնիվ, և' Շիրակում, և' Լոռիում մարդկային մեծ ներուժ կա, ու տեղում հնարավորություններ ստեղծելու դեպքում այս ոլորտը կշարունակի զարգանալ:

Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում. Գրեթե բոլոր մարզերում առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտում առկա կազմակերպությունների թիվը մեծ չէ, և ընկերությունների կեսը պետական կառավարման մարմիններ են՝ պետության կողմից օժանդակվող հիվանդանոցներ և բժշկական կենտրոններ: Շիրակում աշխատանքի պահանջարկը ոլորտում համապատասխանում է առաջարկին. այստեղ մեծ է աշխատատեղերի թիվը (1422), և փոքր է Զբաղվածության պետական գործակալությունում գրանցված գործազուրկների թիվը (35): Ոլորտը դանդաղ զարգանում է, 2017թ.-ի համեմատ 2018թ.-ին ավելի շատ են թափուր և համալրված աշխատատեղերը (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.): Այդուհանդերձ, առողջապահության ոլորտում Շիրակում նշել են նեղ մասնագիտացում ունեցող բժիշկների պահանջարկի մասին, որ չեն կարողանում լրացնել: Լոռիում, Տավուշում և Գեղարքունիքում զբաղվածությունն այս ոլորտում համեմատաբար մեծ է, թեև 2017թ.-ի համեմատ 2018թ.-ին Լոռիում և Տավուշում զարգացում չի արձանագրվել, իսկ Գեղարքունիքում դանդաղ զարգացում է նկատվել (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.): Հավանաբար այս ոլորտում զբաղվածների մեծ մասը պետական կառավարման մարմիններում է աշխատում: Լոռիում, Տավուշում և Գեղարքունիքում առողջապահական ոլորտի մասնագետների գերառաջարկ կա, այս երեք մարզերում գործազուրկների թիվն այնքան մեծ է, որ աշխատանքի առաջարկն այս ոլորտում շարունակելու է գերազանցել

պահանջարկը մոտակա տարիներին ևս: Առողջապահական ոլորտի բոլոր գործազուրկ մասնագետները բուժքույր կամ միջին մակարդակի այլ մասնագետ են:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ, ֆինանսական և ապահովագրական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործունեություն, փոխադրումներ և պահեստային տնտեսություն. Ուսումնասիրված բոլոր մարզերում այս ոլորտում գործող կազմակերպությունները շատ քիչ են: Մշակույթի, զվարճությունների և հանգստի և անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտներում կազմակերպությունների կեսը պետական կառավարման մարմիններ են, ինչը ենթադրում է, որ այս ոլորտներում փոփոխությունը պայմանավորված չէ շուկայական միտումներով: Շիրակում, Տավուշում և Գեղարքունիքում մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտում թափուր և համալրված հաստիքների թիվը փոքր է, մինչդեռ Լոռիում բավական մեծ է այս ոլորտում զբաղվածների թիվը (843), շատերը հավանաբար աշխատում են մարզի նորաբաց ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում: Լոռիում այս ոլորտը դանդաղ զարգանում է, ավելի մեծ է զբաղվածների և թափուր աշխատատեղերի թիվը (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.): Գեղարքունիքում համեմատաբար բարձր է զբաղվածության մակարդակն անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտում գործող 21 խոշոր ընկերություններում, սակայն ոլորտի զարգացում չի արձանագրվել (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.): Ուսումնասիրված բոլոր մարզերում շատ քիչ են գրանցված ընկերությունները ֆինանսական և ապահովագրական գործունեության, փոխադրումների և պահեստային տնտեսության ոլորտներում, և այս բոլոր ոլորտներում աշխատաշուկայում փոքր պահանջարկը բացատրում է մշակույթի, արվեստի և դիզայնի, փոխադրումների համակարգերի, տնտեսագիտության և կառավարման բնագավառներում գործազուրկների մեծ թիվը: 2017թ.-ի համեմատ 2018թ.-ին այս ոլորտների զարգացում չի նկատվել (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.):

Շինարարություն. Այս ոլորտում աշխատանքի շուկայում աճի միտում կա, 2017թ.-ի համեմատ 2018թ.-ին ավելի մեծ է թափուր և համալրված հաստիքների թիվը Շիրակում և Գեղարքունիքում (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.): Թեև Շիրակում այս ոլորտում ընդամենը 30 ընկերություն է գրանցված, դրանց մեծ մասը միջին չափի են. յուրաքանչյուրը միջինում 12 աշխատակից ունի: Գեղարքունիքում այս ոլորտում գործող 44 ընկերությունները 508 աշխատատեղ են ապահովում: Տավուշում այս ոլորտում զբաղվածության մակարդակը համեմատաբար բարձր է, սակայն զարգացման որևէ միտում այս ոլորտում չի արձանագրվել ո՛չ Տավուշում, ո՛չ Լոռիում:

Լոռիում տվյալ ոլորտում շատ քիչ են թափուր և համալրված հաստիքները, ինչը բացատրում է շինարարության և դիզայնի բնագավառներում գործազրկության բարձր մակարդակը: Այնուամենայնիվ, տարիների ընթացքում մարզերից ոչ մեկում չի փոխվել Զբաղվածության պետական գործակալությունում գրանցված շինարարության կամ դիզայնի բնագավառի մասնագետ գործազուրկների թիվը (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.):

Պետական կառավարում և պաշտպանություն. Այս ոլորտի բոլոր թափուր աշխատատեղերը պետական մարմիններում են, հիմնականում պաշտպանական ոլորտում: Ընդհանուր առմամբ, ուսումնասիրված բոլոր մարզերում աշխատանքի պահանջարկն այս ոլորտում պայմանավորված չէ շուկայական միտումներով:

Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն, վարչարարական և օժանդակ գործունեություն, հանքագործական արդյունաբերություն, էլեկտրականություն, ջրամատակարարում, թափոնների կառավարում. Ուսումնասիրված բոլոր մարզերում այս ոլորտներում աշխատանքի պահանջարկ գրեթե չկա: Այնուամենայնիվ, Գեղարքունիքում էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտում զարգացման նշաններ են արձանագրվում. 2019թ. ոլորտում 12 ակտիվ ընկերություն և 211 աշխատատեղ կա (Պետական եկամուտների կոմիտե, 2019թ.): Վերականգնվող էներգիայի մատակարարումը զարգացման ներուժ ունեցող նոր ոլորտ է այս մարզի շուկայում: Ըստ Գեղարքունիքի մարզպետարանի, առաջիկա երկու տարիների ընթացքում նախատեսվում է ներդրումային ծրագրեր իրականացնել այս ոլորտում: Արդեն հաստատվել են Մեծ Մասրիկ համայնքում արևային էներգիայի կայանների, նաև Սևանի տարածքում՝ հողմային կայանների շինարարության ծրագրերը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած զարգացմանը, վերոհիշյալ բոլոր ոլորտներում Զբաղվածության պետական գործակալությունում գրանցված նման մասնագիտություններ ունեցող գործազուրկների թվի նվազում չի արձանագրվել, մինչդեռ 2017թ.-ի համեմատ 2018թ.-ին մինչև 8% նվազել է մասնագիտություն չունեցող գործազուրկների թիվը (Զբաղվածության պետական գործակալություն, 2018թ.): Դրանից կարելի է ենթադրել, որ Զբաղվածության պետական գործակալությանը երևի հաջողվում է միայն նպաստել աշխատանքի տեղավորմանը զբաղմունքի հիմնական տեսակների գծով, սակայն այն դժվարանում է գործազուրկներին պատրաստել ավելի բարձր պաշտոնների համար:

Ըստ տվյալների, Զբաղվածության պետական գործակալությունը մեծ համբավ չի վայելում որոշ մարզերում: Շիրակում գործազուրկների ընդամենը 31 տոկոսն է գրանցված Զբաղվածության պետական գործակալությունում: Լոռիում և Տավուշում, համապատասխանաբար, գործակալությունում գրանցված են գործազուրկների 64 և 66 տոկոսը: Գեղարքունիքում գրանցված մարդկանց թիվը գերազանցում է Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության արձանագրած գործազուրկների թվին (Զբաղվածության պետական գործակալություն, 2017թ., Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, 2018թ.): Այս երևույթը կարելի է բացատրել հետևյալ գործոններով. (1) Զբաղվածության պետական գործակալությունը հաշվի է առնում միայն ֆորմալ զբաղվածությունը, ինչը նշանակում է, որ անձը կարող է ինքնազբաղված լինել ու միևնույն ժամանակ գրանցվել գործակալությունում, իսկ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը չափում է զբաղվածության բոլոր տեսակները, (2) ինչպես հաստատում են բոլոր մարզերի գործատուները, ոմանք գրանցվում են Զբաղվածության պետական գործակալությունում ոչ թե գործազրկության պատճառով, այլ գործազուրկի կարգավիճակը պահպանելու և որոշակի սոցիալական նպաստ ստանալու ցանկությունից դրդված:

Զբաղվածության պետական գործակալությունում գրանցված գործազուրկների մեծամասնությունը բոլոր մարզերում կանայք են: Մասնակիցների կողմից նշված՝ Զբաղվածության պետական գործակալությունում չգրանցվելու հիմնական պատճառները հետևյալն են. աշխատանքի շուկան բաց է, և իրենք կարող են ինքնուրույն աշխատանք գտնել, և գործակալության գործունեությունն արդյունավետ չէ:

Մարզերում գործատուների մեծ մասը հայտնում է Զբաղվածության պետական գործակալության հետ նախկինում ունեցած կամ ընթացիկ համագործակցության մասին: SS, զբոսաշրջության և մշակող արդյունաբերության ոլորտների գործատուները նշել են, որ Զբաղվածության պետական գործակալության կողմից ուղարկված աշխատանքի դիմորդները հիմնականում բավարար որակավորում չունեին, այդ պատճառով ոմանք դադարեցրել են համագործակցությունը գործակալության հետ: Շիրակում և Գեղարքունիքում գործատուներն ընդհանուր առմամբ գոհ էին համագործակցությունից և նշել են, որ կարողացել են Զբաղվածության պետական գործակալության օգնությամբ աշխատակիցներ գտնել իրենց գործարաների համար: Լոռիում և Տավուշում գործատուները նշել են, որ Զբաղվածության պետական գործակալության հետ համագործակցությունն արդյունավետ չէ: SS կենտրոնների ղեկավարները նշել են, որ որպես ուսումնական կենտրոն չեն համագործակցել Զբաղվածության պետական գործակալության հետ, քանի որ դասընթացները թանկ

արժեն, իսկ գործակալության ֆինանսական և ինստիտուցիոնալ կարողությունները սահմանափակ են:

Զբաղվածությանը նպաստող հաստատություններ

Վերը նշված գրականության համաձայն, միջազգային փորձը ցույց է տալիս, որ գործազրկությունն ամբողջ աշխարհում և, մասնավորապես, զարգացող երկրներում պայմանավորված է այնպիսի ինստիտուցիոնալ գործոններով, ինչպիսիք են դպրոցից աշխատանքի անցնելու դժվարությունները, կրթական համակարգերը և այլն: Քանի որ Հայաստանում նախկինում անցկացված ուսումնասիրությունների արդյունքում դպրոցից աշխատանքի անցումը նշվել է որպես գործազրկության հիմնական պատճառներից մեկը, սույն հետազոտությունն անդրադառնում է մարզերում բուհերին և այդ գործընթացին նպաստող նրանց գործունեությանը, եթե այդպիսին առկա է: Ուսումնասիրվում է նաև կամավորությունը՝ որպես տվյալ գործընթացին նպաստող գործոն:

Համագործակցություն ակադեմիական հաստատությունների և գործատուների միջև

Գործատուների և տեղական համալսարանների միջև առկա համագործակցությունն ինստիտուցիոնալ բնույթ չի կրում և կենտրոնացված է ուսանողների համալսարանական աշկերտության ծրագրերի շուրջ. ուսանողներն աշկերտություն են անցնում տեղական ընկերություններում: SS ոլորտում գործում է աշկերտության ծրագիր՝ ուսանողներին հմտություններով զինելու և աշխատաշուկային պատրաստելու համար: Սակայն կան որոշակի դժվարություններ, քանի որ համալսարաններում ուսանողների ստացած գիտելիքները հնացած են և չեն համապատասխանում շուկայի պահանջներին: Բացի այդ, աշկերտության ծրագրում բացակայում է ինստիտուցիոնալ մշտադիտարկման համակարգը, իսկ ուսանողները գործնական աշխատանքով չեն զբաղվում:

Շիրակում, Լոռիում և Տավուշում զբոսաշրջության և սպասարկման ոլորտում հարցված գործատուները համագործակցում են տեղական համալսարանների հետ, իսկ ուսանողներն իրենց համալսարանական աշկերտությունն անցնում են այդ կազմակերպություններում: Շիրակում և Տավուշում գործատուները գոհ էին այդ գործընթացից և նշել են, որ ուսանողներից ոմանց աշխատանքի են ընդունել: Լոռիում,

գործատուի խոսքով, ուսանողները որևէ հետաքրքրություն չեն ցուցաբերում, և աշկերտությունն ավելի շուտ ֆորմալ բնույթ է կրում: Գեղարքունիքում գործատուն չի համագործակցում տեղական համալսարանի հետ:

Մշակող արդյունաբերության ոլորտում բոլոր գործատուները համագործակցում են համալսարանների հետ, և ուսանողներն իրենց համալսարանական աշկերտությունն այդ կազմակերպություններում են անցնում: Շիրակում գործատուն նշել է, որ համագործակցում է տեղական համալսարանների և քոլեջների հետ, բայց ուսանողների մեծ մասը զուտ ֆորմալ կերպով է անցնում աշկերտությունը, նրանցից շատ քչերն են ուզում տվյալ ոլորտում աշխատել: Նույն իրավիճակը Լոռիում և Տավուշում է. ուսանողները գալիս են, սովորում են, բայց շատ հազվադեպ են ցանկանում մնալ և շարունակել աշխատել արտադրությունում: Գեղարքունիքում գործատուներից մեկը նշել է, որ աշկերտությունը հաջող է անցնում, քանի որ ուսանողները շատ բան են սովորում իրենց գործարանում աշկերտության ընթացքում, այդ թվում համակարգչային ծրագրերի առումով, այնպես որ նրանց մոտիվացիան աճում է:

Գործազուրկների կարծիքով, համալսարական աշկերտության արդյունավետությունն ու օգտակարությունը կախված են մասնագիտությունից և աշկերտության վայրից: Բանկերում կամ այլ ֆինանսական հաստատություններում աշկերտություն անցնող մասնակիցները նշել են դրա արդյունավետությունը, ասելով, թե այն նպաստել է իրենց զարգացմանն ու ավելի մեծ վստահությանը աշխատանք փնտրելիս: Դպրոցներում կամ գրասենյակներում վարչական պարտականությունների իրականացմանը մասնակցած անձինք նշել են, որ մասնագիտությանն առնչվող որևէ գործունեությամբ չեն զբաղվել:

Շիրակում գրեթե բոլոր մասնակիցներն աշկերտության և պրակտիկայի փորձ են ունեցել և ընդհանուր առմամբ գոհ են դա որակից: Սակայն մասնակիցները դժգոհել են, որ գործատուներն աշկերտությունը կամ պրակտիկան աշխատանքային փորձ չեն համարում: Լոռիում մասնակիցներից քչերն էին գոհ իրենց աշկերտությունից, իսկ ոմանք նշել են, որ որևէ բան չեն սովորել այդ ընթացքում: Տավուշում մասնակիցներն ընդհանուր առմամբ դժգոհ էին աշկերտությունից, նշելով, որ գործատուները դա աշխատանքային փորձ չեն համարում: Գեղարքունիքում մասնակիցների մեծամասնությունն իրենց քոլեջներում է անցել աշկերտությունը, որը, ամենայն հավանականությամբ, ֆորմալ բնույթ էր կրում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ուսումնական հաստատությունների և գործատուների միջև առկա համագործակցությունը շատ թույլ է, քանի որ այն միայն աշկերտության ծրագրեր է ներառում, իսկ գործատուները ներգրավված չեն որևէ

գործունեության մեջ, որը կարող է ազդեցություն գործել համալսարանական համակարգի վրա ու ուսանողների կրթության վրա: Չնայած աշկերտության ծրագիրն օգտակար է ուսանողների համար, մասնակիցները նշում են դրա թերությունները՝ գործնական աշխատանքի բացակայություն, ուսանողների շրջանում մոտիվացիայի պակաս, նաև աշկերտության ֆորմալ բնույթ:

Կամավորական աշխատանք

Հայաստանում կամավորական աշխատանքը սահմանող և այն կանոնակարգող օրենք չկա: Կառավարության 2017-2022թթ. ծրագրի համաձայն, նախատեսվում է իրավական հենք ստեղծել կամավորության համար, սակայն գործընթացը դադարեցվել է, և հայտնի չէ՝ վերսկսվելու է այն, թե ոչ: Պրակտիկան և աշկերտությունը կանոնակարգվում են Հայաստանի աշխատանքային օրենսգրքով: Նախկինում անցկացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում կամավորությունը մեծամասամբ ընկալվում է որպես կարիերայի զարգացման միջոց ու հիմնականում կիրառվում է քաղաքացիական հասարակության կառույցներում (Պատուրյան 2016թ., Գալստյան 2018թ.): Կամավորական գործունեությամբ զբաղվող երիտասարդների թիվը փոքր է: Հետազոտությունը ցույց է տալիս, որ կամավորները հիմնականում զբաղվում են վարչական, կազմակերպչական և սոցիալական գործունեությամբ: Կամավորները նման գործունեությամբ են զբաղվում հետևյալ պատճառներով. աշխատանք գտնելու կամ զբաղմունք ունենալու, իրենց մասնագիտական գիտելիքներն օգտագործելու, նոր հմտություններ և գիտելիքներ ստանալու, նոր ընկերներ ձեռք բերելու և հնարավոր գործատուներ գտնելու նպատակով (Պատուրյան 2016թ., Գալստյան 2018թ.): Հայաստանում կամավորության համար խոչընդոտ է հանդիսանում հետևյալը. կամավորական աշխատանքն աշխատանքային փորձ չի համարվում, բացակայում են փոխհատուցման մեխանիզմները, և, ընդհանուր առմամբ, կամավորության տարբեր ասպեկտները կանոնակարգելու համար ֆորմալ մեխանիզմներ չկան (Գալստյան 2018թ.):
Թիրախային մարզերից յուրաքանչյուրում առանձնացվել է մեկական խոշոր ՀԿ, որն աշխատում է կամավորների հետ և կամավորության ոլորտում, նրանց ներկայացուցիչների հետ խորքային հարցազրույցներ են անցկացվել:[19]

[19] Շիրակում՝ Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն, Լոռիում՝ ՀԿ կենտրոն, Երիտասարդների հետ համագործակցության կենտրոն Դիլիջանում, Հայկական Կարիտաս՝ Գեղարքունիքում

Հարցված բոլոր ՀԿ-ները նշել են, որ կամավորության գաղափարը սխալ է ընկալվում. համարվում է, որ կամավորները միամիտ են, որ որևէ մեկի համար աշխատում են անվճար՝ փոխարենը ոչինչ չստանալով: Տեղաբնակները չեն հասկանում կամավորության օգուտներն ու օգտակարությունը: Այնուամենայնիվ, Շիրակում, Տավուշում և Գեղարքունիքում ՀԿ-ները նշել են ընկալման դրական փոփոխության և կամավորների թվի աճի մասին: Լոռիում մի ՀԿ նշել է, որ որևէ ակնհայտ առաջընթաց չկա: Բոլոր ՀԿ-ներն ընդգծել են այն փաստը, որ երիտասարդներն իրենց դիմում են կամավորության նպատակով մասնագիտական հմտությունները բարելավելու, անհրաժեշտ փափուկ հմտություններ ձեռք բերելու, նաև աշխատանքային փորձ ստանալու համար: Շիրակում և Տավուշում օտարերկրացիների ներկայությունը գրավում է կամավորներին, քանի որ նրանք սեփական հաղորդակցության և լեզվական հմտությունների բարելավման, նաև մասնագիտական ծանոթությունների ցանցի ընդլայնման հնարավորություն են տեսնում: Բոլոր ՀԿ-ները նշել են, որ կամավորները հիմնականում վարչական և կազմակերպչական աշխատանքներում են ներգրավված, ընդգծելով այն փաստը, որ նրանք իրենց ներուժի զարգացման ուղղությամբ են աշխատում: Կամավորները տարբեր տեսակի աշխատանք են կատարում՝ բովանդակության կազմում, մարքեթինգ սոցիալական մեդիաներում, սոցիալական աշխատանք, դասընթացների անցկացում: Բոլոր կազմակերպությունները մատնանշել են փաստը, որ կամավորությունն օգնում է մարդկանց աշխատանք գտնել, քանի որ կամավորները կարող են աշխատանք փնտրելու համար անհրաժեշտ հմտություններ ձեռք բերել և բարելավել փափուկ հմտությունները:

Ինչո՞ւ ես պետք է կամավոր աշխատեմ: Մի՞թե այդքան միամիտ եմ, որ անվճար աշխատեմ (կամավորության վերաբերյալ լայնորեն տարածված ընկալում):

Կամավորների մեծամասնությունը խոշոր քաղաքներում բնակվող 18-25 տարեկան կանայք են կազմում: Հազվադեպ է պատահում, երբ կամավորները մոտակա գյուղից են լինում: Դրա հիմնական պատճառը հուսալի հանրային տրանսպորտի բացակայությունն է: Նշված այլ պատճառներից է այն հանգամանքը, որ մյուս համայնքներում սոցիալական պայմաններն ավելի վատթար են, քան խոշոր քաղաքներում, ուստի երիտասարդները վճարովի աշխատանք են փնտրում: Կարծրատիպերի պատճառով տղամարդկանց շրջանում կամավորությունն ավելի քիչ հավանական է. նրանք վախենում են ընկերների ծաղրից:

Բոլոր ՀԿ-ները հայտնել են համալսարանների հետ ընթացիկ համագործակցության և իրենց մոտ որպես կամավոր ներգրավված ուսանողների մասին: Շիրակում և Գեղարքունիքում ուսանողներն աշկերտություն են անցնում կազմակերպություններում և այդ ընթացքում որոշակի հմտություններ են ձեռք բերում, որոնք չեն դասավանդվում համալսարաներում, օրինակ՝ առաջնորդության և կոնֆլիկտների կառավարման, նաև գործնական աշխատանքային հմտություններ: Լոռիում և Տավուշում ՀԿ-ների և համալսարանների միջև ինստիտուցիոնալ համագործակցություն չկա: Լոռիում ՀԿ-ները ներգրավում են տեղացի ուսանողներին, եթե վերջիններս դիմում են, իսկ Տավուշում ՀԿ-ն չի ներգրավում տեղաբնակ ուսանողներին, քանի որ վերջիններիս որակավորումը բավարար չէ աշխատանք կատարելու համար:

Շիրակում գործող միայն մեկ ՀԿ է նշել Զբաղվածության պետական գործակալության հետ սերտ համագործակցության մասին: Այդ կազմակերպությունն ակտիվորեն աշխատում է Զբաղվածության պետական գործակալության հետ ոչ միայն Գյումրիում, այլև Մարալիկում, որտեղ ընդունում է գործակալության ուղարկած կամավորներին: Կազմակերպությունը նաև Զբաղվածության պետական գործակալություն է ուղարկում իր կամավորներին, երբ վերջիններիս հմտությունները համապատասխանում են առկա աշխատանքային հնարավորություններին: Լոռիում, Տավուշում և Գեղարքունիքում ՀԿ-ները նշել են, որ չեն համագործակցում Զբաղվածության պետական գործակալության հետ:

Բոլոր ՀԿ-ների ներկայացուցիչները համաձայնել են, որ կամավորության զարգացման և խթանման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալը. (1) ընդունել օրենք կամավորության մասին, (2) հանրային պատշաճ իրազեկում իրականացնել՝ կամավորությունը խրախուսելու և դրա օգուտներն ու օգտակարությունը բացատրելու նպատակով՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի ջանքերի շնորհիվ, և (3) լուծել ոչ հուսալի հանրային տրանսպորտի խնդիրը:

Գործազրկության պատճառները

Դեմ առ դեմ հարցազրույցների ընթացքում և՛ գործատուներին, և՛ գործազուրկներին խնդրել են կարծիք հայտնել գործազրկության պատճառների վերաբերյալ՝ տեղերում տիրող տեսակետին ծանոթանալու նպատակով, նաև տեսնելու՝ արդյո՞ք երկու կողմերն էլ ընդհանուր խնդիրներ կմատնանշեն, թե ոչ:

Շիրակում, Լոռիում, Տավուշում և Գեղարքունիքում և՝ գործատուները, և՝ գործազուրկներն իրենց մարզերում երկարատև գործազրկության պատճառների երկար ցանկ են ներկայացրել: Գրեթե բոլոր գործատուների և գործազուրկների կողմից նշված հիմնական պատճառներն են. *մարզերում աշխատանքի առաջարկը գերազանցում է պահանջարկին, երիտասարդները սխալ մասնագիտություն են ընտրում՝ դպրոցներում մասնագիտական խորհրդատվական մարմինների բացակայության հետևանքով, համալսարաններում ոչ արդյունավետ աշկերտության ծրագրեր, երիտասարդների շրջանում գործնական աշխատանքային փորձի պակաս, հնացած կրթական համակարգ և նյութեր, որ չեն համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին, անհրաժեշտ ենթակառուցվածքների (տրանսպորտ) բացակայություն, երիտասարդների շրջանում մոտիվացիայի պակաս, հիմնականում առաջարկվող ծանր աշխատանքային պայմաններ և ցածր աշխատավարձ, նաև աշխատողների իրավունքների խախտումներ:*

Ստորև առանձին ներկայացված են գործազրկության պատճառները՝ գործատուների և գործազուրկների տեսանկյունից:

Գործատուների կարծիքները

Շիրակում

- Մասնագիտության անհաջող ընտրություն՝ դպրոցներում խորհրդատվական մարմինների բացակայության պատճառով
- Անհաջող համալսարանական աշկերտության ծրագրեր, ուսման տարիների ընթացքում գործնական աշխատանքային փորձի բացակայություն
- Կամավորական գործունեության մեջ/պրակտիկայում ուսանողների ներգրավման պակաս
- Ծանր աշխատանքային պայմաններ և ցածր աշխատավարձեր
- Մարզում զվարճանքների պակաս
- Ուսումնական հաստատությունների և գործատուների միջև

Տավուշում

- Ծուլություն
- Մասնագիտության անհաջող ընտրություն՝ դպրոցներում խորհրդատվական մարմինների բացակայության պատճառով
- Անբավարար որակավորում ունեցող շրջանավարտներ, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտությունների պակաս
- Աշխատանքի առաջարկը զգալիորեն գերազանցում է պահանջարկին
- Ուսումնական հաստատությունների և գործատուների միջև համագործակցության բացակայություն
- Միջին մակարդակի/տեխնիկական մասնագետների պահանջարկ,

համագործակցության բացակայություն
- Անբավարար որակավորում ունեցող շրջանավարտներ, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտությունների պակաս
- Ինքնազարգանալու մոտիվացիայի պակաս երիտասարդների շրջանում

Լոռիում
- Աշխատատեղերի պակաս
- Երիտասարդների մոտիվացիան, երիտասարդներն ուզում են հեշտ աշխատանք և բարձր վարձատրություն
- Աշխատանքի առաջարկը զգալիորեն գերազանցում է պահանջարկը
- Անբավարար որակավորում ունեցող շրջանավարտներ, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտությունների պակաս
- Ուսումնական հաստատությունների և գործատուների միջև համագործակցության բացակայություն
- Մարզում զվարճանքների պակաս հատկապես գյուղատնտեսության ոլորտում, և առաջարկի բացակայություն
- Երիտասարդների շրջանում գյուղատնտեսության և մշակող արդյունաբերության ոլորտներում աշխատելու մոտիվացիայի պակաս
- Անհաջող համալսարանական աշկերտության ծրագրեր, ուսման տարիների ընթացքում գործնական աշխատանքային փորձի բացակայություն
- Հնացած կրթական համակարգ և նյութեր

Գեղարքունիքում
- Աշխատատեղերի պակաս
- Անբավարար որակավորում ունեցող շրջանավարտներ, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտությունների պակաս
- Առկա աշխատատեղերի սեզոնային բնույթ
- Երիտասարդների շրջանում աշխատելու մոտիվացիայի պակաս
- Մասնագիտության անհաջող ընտրություն՝ դպրոցներում խորհրդատվական մարմինների բացակայության պատճառով
- Հնացած կրթական համակարգ և նյութեր

Գործազուրկների կարծիքները

- Անհաջող համալսարանական աշկերտության ծրագրեր, ուսման տարիների ընթացքում գործնական աշխատանքային փորձի բացակայություն
- Ծանր աշխատանքային պայմաններ և ցածր աշխատավարձ
- Հայաստանի աշխատանքային օրենսգրքի մշտական խախտումներ (բոլոր մարզերում նշվել են հղի կանանց իրավունքների խախտման դեպքեր՝ երեխայի

խնամքի արձակուրդ չի տրամադրվել, և կանայք պարզապես հեռացվել են աշխատանքից)

- Ընտանիք, երեխաներ
- Ենթակառուցվածքների բացակայություն (նշվել է գյուղերում առկա թափուր աշխատատեղերի և աշխատելու ցանկության մասին, սակայն հաստիքները չեն լրացվել դեպի հեռավոր համայնքներ տրանսպորտի բացակայության պատճառով)
- Դպրոցներում մասնագիտական խորհրդատվության բացակայություն
- Հնացած կրթական համակարգ և նյութեր
- Աշխատանքի առաջարկը գերազանցում է պահանջարկը

Եզրակացություններ

Հետազոտության արդյունքները որոշակի կերպով ներկայացնում են Շիրակում, Լոռիում, Տավուշում և Գեղարքունիքում աշխատաշուկայի ներկա իրավիճակը գործազրկության և զբաղվածության, նաև աշխատանքի առաջարկի և պահանջարկի միջև առկա ճեղքվածքի տեսանկյունից: Արդյունքները բացահայտում են ներկայում մարզերում գործատուների և գործազուրկների առաջ ծառացած խնդիրները, ինչպես նաև աշխատանքի շուկաների զարգացման միտումները և հնարավորությունները:
Այս հետազոտության արդյունքում պարզվել է, որ ուսումնասիրված բոլոր մարզերում երիտասարդների շրջանում մեծ է գործազրկությունը, և դրա մակարդակն ավելի բարձր է քաղաքային բնակավայրերում: Գործազուրկների մեծամասնությունը երկար ժամանակ գործազուրկ է եղել, ինչի հետևանքով ավելի է հեռացել աշխատանքի շուկայից: Տղամարդկանց շրջանում գործազրկությունը մի փոքր ավելի շատ է, քան կանանց դեպքում, անկախ այն փաստից, որ կանանց որոշակի տոկոս գործազուրկ է ընտանիքի անդամների խնամքի պատճառով: Թեև գործազրկության մակարդակն ավելի ցածր է բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց շրջանում, քան միջնակարգ կրթություն ունեցողների պարագայում, վիճակագրորեն այս արդյունքները հաստատված չեն:

Ուսումնասիրված բոլոր մարզերում զբաղվածությունը կենտրոնացած է գյուղատնտեսության ոլորտում, դրան հաջորդում են վաճառքի և սպասարկման և մշակող արդյունաբերության ոլորտները: Զբաղվածության բարձր մակարդակ է արձանագրվել նաև կրթության և առողջապահության ոլորտներում, սակայն այստեղ

զբաղված մարդիկ հիմնականում հանրային դպրոցների ուսուցիչներ են և բժիշկներ՝ հիվանդանոցներում և բժշկական կենտրոններում, որտեղ շուկան չի զարգանում: Մարզերում զբաղվածների կեսը գյուղատնտեսական գործունեությամբ է զբաղվում, հիմնականում ոչ ֆորմալ զբաղվածության և ֆերմայում ինքնազբաղվածության տեսքով: Սա նշանակում է, որ մարզերում զբաղվածների մեծամասնության պարագայում զբաղվածությունը խոցելի է:

Գյուղատնտեսությունը, մշակող արդյունաբերությունը, մեծածախ և մանրածախ առևտուրը, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգումը, կացության և հանրային սննդի կազմակերպումը և սպասարկման այլ ծառայությունները մարզերում զարգացող ոլորտներ են, որտեղ աճում են աշխատանքի հնարավորությունները: Այլ շուկաներում շատ ցածր է կամ գրեթե բացակայում է աշխատանքի պահանջարկը մարզերում, բացառությամբ Գեղարքունիքի, որտեղ զարգանում է վերականգնվող էներգիայի ստացման նորարարական նոր շուկան:

Տեղեկատվական տեխնոլոգիաները (ՏՏ) մեկ այլ ոլորտ է, որ զարգանում է Շիրակում և Լոռիում՝ հիմնականում Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների առկայության շնորհիվ: Այդուհանդերձ, շարունակվում է մարդկանց արտահոսքը մարզերից դեպի Երևան՝ երևանյան ընկերությունների առաջարկած ավելի բարձր աշխատավարձերի և հնարավորությունների պատճառով: Ներկայում բազմաթիվ ուսանողներ են սովորում ՏՏ բնագավառում, ու եթե համապատասխան քայլեր չձեռնարկվեն, ՏՏ ոլորտում մասնագիտացող երիտասարդների արտագաղթը մարզերից կշարունակվի նոր թափով: Որոշ դեպքերում ՏՏ ոլորտում երիտասարդներն աշխատում են միջազգային պատվիրատուների հետ առցանց՝ հայրենի քաղաքներից:

Հիմնական խնդիրը, որին բախվում են և' զբաղվածները, և' պոտենցիալ աշխատողները, ուսումնասիրված բոլոր մարզերում շուկայում աշխատանքի պահանջարկի և առաջարկի միջև առկա մեծ ճեղքվածքն է՝ առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության առումով: Որոշ մասնագիտությունների դեպքում առաջարկը չափազանց մեծ է (հումանիտար գիտություններ, տնտեսագիտություն և կառավարում, կրթություն, առողջապահություն), որոնց պահանջարկը մարզերում ցածր է կամ իսպառ բացակայում է: Հավանական է, որ այս միտումը շարունակվի մոտակա 5-6 տարիների ընթացքում, քանի որ երիտասարդները շարունակում են բուհերում ընտրել այս մասնագիտությունները, որոնց պարագայում մարզերում աշխատանքի պահանջարկը բացակայում է: Նույնիսկ աշխատանքի պահանջ ունեցող շուկաներում (սպասարկում և մշակող արդյունաբերություն), մասնագիտությունների առաջարկի և գերառաջարկի դեպքում գործատուների համար դժվար է

տեղաբնակներին աշխատանքի ընդունել, քանի որ տեղացի մասնագետների ու տեղական համալսարանների շրջանավարտների որակավորումը բավարար չէ աշխատաշուկայի պահանջների համար: Տեղական բուհերում տրամադրվող կրթությունը չի ապահովում երիտասարդներին աշխատանքի շուկայում պահանջվող գիտելիքներով և հմտություններով, իսկ ինքնազարգացման մոտիվացիան երիտասարդների շրջանում շատ փոքր է: Այս իրավիճակը հիմնականում վերագրում են դպրոցներում մասնագիտական խորհրդատվական մարմինների բացակայությանը, որոնք կարող էին օգնել երիտասարդներին ընտրել այնպիսի մասնագիտություններ, որոնք պահանջված են մարզերի աշխատանքի շուկաներում, նաև երիտասարդներին զինել սեփական մասնագիտական ուղին որոշելու համար անհրաժեշտ հմտություններով: Դրանից զատ, ուսանողների համար ուսումնական ծրագրեր կազմելիս բուհերը հաշվի չեն առնում աշխատաշուկայի պահանջները: Ի վերջո, բուհն ավարտելիս երիտասարդները գործնական աշխատանքային փորձ չունեն՝ համալսարանական աշկերտության թերությունների և կամավորական գործունեության բնագավառում ներգրավված ուսանողների փոքր թվի պատճառով: Դրա հիմնական պատճառը գործատուների և ուսումնական հաստատությունների միջև ինստիտուցիոնալ համագործակցության բացակայությունն է: Մարզերում գործող զբաղվածությանն աջակցող միակ մարմնի՝ Զբաղվածության պետական գործակալության արդյունավետությանը որոշակի սահմանափակումներ են խանգարում: Այսպիսով, ունենք թերի որակավորում ունեցող երիտասարդներ, ովքեր չեն կարող աշխատանք գտնել, և գործատուներ, ովքեր չեն կարողանում աշխատակից գտնել:

Գյուղատնտեսության և մշակող արդյունաբերության ոլորտներում գործատուներն ավելի լուրջ խնդիրների են բախվում, քան պարզապես որակավորված մասնագետ գտնելու դժվարությունը: Մասնագետների պակաս կա, քանի որ երիտասարդները մշակող արդյունաբերության կամ գյուղատնտեսության բնագավառում աշխատելու ցանկություն չունեն, որովհետև համարվում է, որ գործարաններում և դաշտերում աշխատանքը ծանր է, իսկ վարձատրությունը՝ ցածր: Այս գաղափարը լուրջ ռիսկ է ներկայացնում մարզային զարգացման համար, քանի որ գյուղատնտեսությունն այն ոլորտն է, որտեղ աշխատում է մարզերում զբաղվածների կեսը: Սերնդափոխությունն իր հետ լուրջ խնդիրներ կբերի այս ոլորտում, որոնք կարող են բացասաբար ազդել ամբողջ երկրի վրա:

Ընդհանուր առմամբ, ավագ սերնդի համեմատ երիտասարդներն ավելի բարձր աշխատավարձ և լավ աշխատանքային պայմաններ են պահանջում: Սա կարելի է

բացատրել այն փաստով, որ Հայաստանում ծնողները շարունակում են հոգ տանել իրենց զավակների մասին նույնիսկ այն ժամանակ, երբ վերջիններս ավարտում են բուհը, այնպես որ երիտասարդներն աշխատանք գտնել չեն շտապում: Գործազուրկ երիտասարդները մոտիվացված չեն սեփական բիզնես հիմնելու հարցում՝ գլխավորապես ձեռնարկատիրական հմտությունների և գործարար ոլորտի մասին գիտելիքների բացակայության պատճառով:

Ի վերջո, կա երկու այլ կարևոր խնդիր, որ նպաստում են մարզերում երիտասարդների մոտիվացիայի բացակայությանը և գործազրկությանը. (1) ոչ հուսալի կամ անհասանելի միջհամայնքային հանրային տրանսպորտը, ինչը սահմանափակում է աշխատանքային հնարավորությունները գործազուրկների և կամավորական աշխատանքի հնարավորությունները՝ երիտասարդների համար, և (2) մարզերում աշխատակիցների աշխատանքային իրավունքների մշտական խախտումը սովորական երևույթ է դարձել:

Վերջում կարելի է նշել, որ Շիրակում, Լոռիում, Տավուշում և Գեղարքունիքում երիտասարդների գործազրկությունը խնդիր է, որ խոչընդոտում է մարզերի սոցիալ-տնտեսական զարգացումը: Բազմաթիվ տնտեսական, սոցիալական և մշակութային խնդիրներ կան, որ պետք է լուծվեն պետական ու մասնավոր հատվածների համատեղ ջանքերով, թիրախավորված կարճաժամկետ և երկարաժամկետ քայլերի միջոցով՝ գործազրկությունը նվազեցնելու և մարզերի հետագա զարգացմանը նպաստելու նպատակով:

Հանձնարարականներ

Հետևյալ հանձնարարականները հիմնված են հետազոտական նախագծի տվյալների վերլուծության վրա: Ներկայացված են կարճաժամկետ և երկարաժամկետ հանձնարարելի գործողությունները:

- Ստեղծել հարթակ առցանց աշխատատեղերի համար և իրազեկմանն ուղղված նախաձեռնություններով հանդես գալ համայնքներում, որպեսզի երիտասարդները տեղեկանան առկա հնարավորություններին և կարողանան իրենց համայնքից աշխատել:
- Հմտությունների և գիտելիքի զարգացմանն ուղղված թիրախավորված, գործնական բաղադրիչներով դասընթացներ անցկացնել (փափուկ հմտություններ, տեխնիկական գիտելիքներ, ձեռնարկատիրություն) տեղական համալսարանների շրջանավարտների համար՝ վերջիններիս տեղական աշխատաշուկայում պահանջվող հմտություններ, նաև ստարտափների

զարգացմանն օժանդակելու նպատակով ձեռնարկատիրական հմտություններ տրամադրելու նպատակով:

- Փոխել Զբաղվածության պետական գործակալության համար սահմանված իրավական ընթացակարգերը, նրա գործունեությունն ավելի իրագործելի և հարմարեցված դարձնել՝ դրանով մեծացնելով գործակալության արդյունավետությունը:
- Դպրոցներում մասնագիտական խորհրդատվություն անցկացնել: Կարճաժամկետ տարբերակ՝ մասնագիտական խորհրդատվությունը կարող է անցկացնել դպրոց այցելող որևէ մարմին, երկարաժամկետ տարբերակ՝ բոլոր դպրոցներում կարելի է մասնագիտական խորհրդատվություն ապահովող մարմին ստեղծել, որ կօգնի աշակերտներին նպատակահարմար աշխատանքային ուղի գտնել:
- Ձեռնարկատիրական ոլորտի կրթություն ընդգրկել դպրոցներում և համալսարաններում՝ երիտասարդներին բիզնեսի զարգացման ուղղությամբ մոտիվացնելու նպատակով:
- Խրախուսել կամավորությունը բոլոր մակարդակներում՝ նախ համապատասխան օրենք ընդունելով, իսկ հետո ընկերությունների համար ինստիտուցիոնալացված պրակտիկայի/կամավորության ծրագրերը խթանող միջոցներ ստեղծելով, որոնք սովորական կդառնան բոլոր մարզերում և կմեծացնեն գործնական աշխատանքի հնարավորությունները երիտասարդների շրջանում:
- Ստեղծել խթաններ (հատուկ հարկային արտոնություններ մարզերի համար) ՏՏ ընկերությունների, ինչպես նաև այլ ստարտափների համար՝ մարզերում գրասենյակներ և մասնաճյուղեր բացելու համար, այն պայմանով, որ երկարաժամկետ գործունեություն են ծավալելու և աշխատանքի են ընդունելու տեղաբնակների որոշակի տոկոս: Այս ջանքերը կնպաստեն տեղական տնտեսության և մարզերում զբաղվածության զարգացմանը:
- Աշխատել գործատուների, համալսարանների և պետական վարչական մարմինների հետ՝ տեղական համալսարաններում երկկողմ աշկերտության ծրագրեր ավելացնելու ուղղությամբ, որոնք կօգնեն երիտասարդներին գործնական աշխատանքային փորձ ձեռք բերել:
- Փոխել կրթական համակարգն ու կրթական նյութերը պետական և մասնավոր հատվածների համատեղ ջանքերով՝ մարզերում աշխատանքի պահանջարկի և առաջարկի միջև ճեղքվածքը փոքրացնելու նպատակով:

- Բարելավել գյուղատնտեսական ոլորտի մասնագիտությունների համբավը կրթական և սոցիալական մեդիա նախաձեռնությունների միջոցով, որոնք ներկայացնում են գյուղատնտեսական ոլորտի օգուտները:
- Լուծել մարզերում հանրային տրանսպորտի խնդիրը՝ երիտասարդների շարժունակությունը բարելավելու և բոլոր համայնքներում աշխատանքային հնարավորությունները մեծացնելու նպատակով:
- Կազմակերպել մշակութային միջոցառումներ և տոնավաճառներ մարզերում՝ մարզային գործունեությունը խթանելու նպատակով:
- Սկսել կառավարության ապակենտրոնացման գործընթացը՝ որոշ նախարարություններ մարզեր տեղափոխելով՝ զբաղվածության հնարավորություններ ստեղծելու և մարզերում տնտեսական գործունեությանը զարկ տալու նպատակով:

Օգտագործված գրականության ցանկ

Յ. Ալմենդինգեր, (1989). «Կրթական համակարգերը և աշխատանքի շուկայի արդյունքները», Եվրոպական սոցիոլոգիական ակնարկ 5, 231-50:

Դ.Ն.Ֆ. Բելլ, Դ.Գ. Բլանչֆլաուեր (2010). «Երիտասարդների գործազրկություն. դեժավյո՞ւ», Աշխատաշուկայի ուսումնասիրման ինստիտուտի (IZA) քննարկման փաստաթուղթ No. 4705, http://ftp.iza.org/dp4705.pdf:

Դ.Ն.Ֆ. Բելլ, Դ.Գ. Բլանչֆլաուեր (2011). «Երիտասարդները և համաշխարհային տնտեսական ճգնաժամը», Օքսֆորդի տնտեսական քաղաքականության ակնարկ, 27, 241-267:

Դ.Ն.Ֆ. Բելլ, Դ.Գ. Բլանչֆլաուեր (2015). «Երիտասարդների գործազրկությունը Հունաստանում: Մարտահրավերի չափում», Աշխատաշուկայի ուսումնասիրման ինստիտուտի (IZA) Եվրոպայի աշխատանքային ուսումնասիրությունների ամսագիր, ISSN 2193-9012, Սփրինգեր, Հայդելբերգ, հատոր 4, համար 1, էջեր 1-25, http://dx.doi.org/10.1186/2193-9012-4-1:

Յ. Բեն Փորաթ, (1967). «Մարդկային կապիտալի արտադրությունը և աշխատավարձի կենսափուլը», Քաղտնտեսության ամսագիր, 75, 352-365:

Դ.Գ. Բլանչֆլաուեր, Ռ.Բ. Ֆրիման, (2000). «ՏՀԶԿ երկրներում երիտասարդ աշխատողների վատթարացող տնտեսական կարգավիճակը»:

Բլայնդեր, Ալան, Վայս (1976). «Մարդկային կապիտալը և աշխատանքի առաջարկը. սինթեզ». Քաղտնտեսության ամսագիր, 84, 449-472:

Ա. Բոնանոմի և ուրիշներ (2019). «Իտալիայում երիտասարդների գործազրկության ընկալումը սոցիալական մեդիայի տվյալների միջոցով», Սուրբ սրտի կաթոլիկ համալսարան, ISI հիմնադրամ:

Ռ. Բրին (2005. «Երիտասարդների գործազրկության անդրազգային տարբերությունների բացատրում. շուկա և ինստիտուցիոնալ գործոններ», Եվրոպական սցիոլոգիական ակնարկ 21, 125-134:

Ս. Բըրջես, Ք. Փրոփեր, Հ. Ռիս և Ա. Շիրեր (2003). «1981թ.. դասակարգը. վաղ գործազրկության ազդեցությունը գործազրկության հետագա փորձառության վրա», Աշխատանքի տնտեսագիտություն, 10.3, 291–309:

Դ. Քարդ. Տ. Լեմյու, (2000): «Հարմարեցում հանգամանքներին. աշխատանքի, դպրոցի և կենսապայմանների զարգացումը Հյուսիսային Ամերիկայի երիտասարդների շրջանում: Երիտասարդների գործազրկությունն ու զբաղվածությունը զարգացած երկրներում», խմբ. Բլանչֆլաուեր և Ֆրիման: Չիկագո և Լոնդոն. Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրո և Չիկագոյի համալսարան:

Ք. Քլարկ, Լ. Սամերս, (1978). «Երիտասարդների գործազրկության դինամիկան», Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոյի աշխատանքային փաստաթուղթ No. 274:

Հ. Դիտրիխ, (2003). «Երիտասարդ գործազուրկների սխեմատիկ մասնակցության և զբաղվածության արդյունքը. էմպիրիկ արդյունքներ եվրոպական ինը երկրներից»: Թորիլդ Հեմեր (խմբ.): «Երիտասարդների գործազրկությունն ու սոցիալական վտարումը

Եվրոպայում»: Համեմատական ուսումնասիրություն: Բրիստոլ. քաղաքականության հրատարակչություն 83–108:

Յ. Դմիտրով (1997). «Երիտասարդների գործազրկությունը Բուլղարիայում», Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի ուսումնասիրություն http://library.fes.de/pdf-files/id/09470.pdf:

Ռ. Ֆրիման, Դ. Ուայզ (1982). «Երիտասարդների աշխատաշուկայի խնդիրը: Բնույթը, պատճառներն ու հետևանքները», Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոյի գրքի գլուխ 1-16, Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրո, Չիկագոյի համալսարանի հրատարակչություն:

Եվրոպական հանձնաժողով, (2014թ. նոյեմբերի 28). «Զբաղվածության վերաբերյալ Հանձնաժողովի համատեղ զեկույցի նախագիծ» (COM [2014] 906): http://ec.europa.eu/europe2020/pdf/2015/jer2015_en.pdf

Մ. Գալստյան (2018). «Ծրագրի անդամ չհանդիսացող երկրների մասնակցությունը ԵՄ երիտասարդական ՎԻՔԻ գործունեությանը», Հայաստան, Գլուխ II, կամավորական գործունեություն:

Մ. Գալստյան (2018). «Հայաստանի կամավորական կազմակերպությունների քարտեզագրում», Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ:

Դ. Հաննան, Դ. Ռաֆֆե, Ե. Սմիթ (1997). «Դպրոցից աշխատանքի անցման անդրազգային հետազոտություն. վերլուծական շրջանակ, Պատրիկ Ուեքուին, Ռիչարդ Բրին և Ջորդի Պլանաս (խմբ.), Երիտասարդների անցումը Եվրոպայում. տեսությունների ապացույց», Cereq, Փաստաթուղթ 120.

Աշխատանքի միջազգային կազմակերպություն. «Որտե՞ղ է երիտասարդների գործազրկության ամենաբարձր մակարդակը» https://www.ilo.org/global/about-the-ilo/multimedia/maps-and-charts/enhanced/WCMS_600072/lang--en/index.htm:

Ջ.Ֆ. Խիմենո, Դ. Ռոդրիգես-Պալենցուելա, (2002). Երիտասարդների գործազրկությունը ՏՀԶԿ երկրներում. Ժողովրդագրական փոփոխությունները, աշխատաշուկայի հաստատությունները և մակրոտնտեսական ցնցումները, EZB աշխատանքային փաստաթղթեր 2002-155.

Լ.Գ. Կլետցեր, Ռ.Վ. Ֆերլի (2003). «Երիտասարդ չափահաս աշխատողների կրճատումների երկարաժամկետ ծախսերը», Արդյունաբերական և աշխատանքային հարաբերությունների ակնարկ, 56.4: 682–98

Գ. Մարտին, (2009): «13 երկրներում երիտասարդների աշխատաշուկայի պատկերը», 1980–2007թթ., Ամենամսյա աշխատանքային ակնարկ 2009թ. հուլիսի 3–21:

Մ. Մորիս, Ս. Ֆրանսուա, Ս. Ժան-Ժակ, (1986). «Արդյունաբերական ուժի սոցիալական հիմքերը. Ֆրանսիայի և Գերմանիայի համեմատություն», Քեմբրիջ, Մասաչուսեթս. ՄՏԻ համալսարանի հրատարակչություն:

«Մեդիա Մոդել» ՍՊԸ (2018). «Հայաստանի աշխատաշուկայի երիտասարդակենտրոն և գենդերազգայուն հետազոտություն» https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/LMR%20Report_Eng.pdf

Վ. Մյուլլեր, Յ. Շավիթ, (1998). «Շերտավորման գործընթացի ինստիտուցիոնալ ներգրավվածությունը. 13 երկրներում որակավորումների և զբաղմունքի տեսակների համեմատական ուսումնասիրություն», Վալտեր Մյուլլեր և Յոսի Շավիթ (խմբ.) «Դպրոցից՝ աշխատանքի. մասնագիտական որակավորումների և մասնագիտական նպատակակետերի համեմատական ուսումնասիրություն», Օքսֆորդ, Քլարենդոն հրատարակչություն:

Գ.Դ. Մյեմա (1997): «Երիտասարդների գործազրկությունը Տանզանիայում. հին խնդրի դեմ պայքարելու նոր ռազմավարություններ»: Բնակչության ուսումնասիրության և զարգացման ամսագիր, հատոր 4, No.1, 1-997

Տ.Ա. Մրոզ, Թ.Հ. Սեվիջ (2001). «Երիտասարդների գործազրկության երկարաժամկետ ազդեցությունները», Հյուսիսային Կարոլինայի համալսարան, Chapel Hill and Welch Consulting Economists https://pdfs.semanticscholar.org/106d/dc9b797e2692e0731c3e71c72ae65800b6fd.pdf

Ռ. Մսիգվա, Ե.Ֆ. Կիպեշա (2013). «Տնտեսագիտության և կայուն զարգացման ամսագիր», ISSN 2222-1700 (Տպագիր) ISSN 2222-2855 (Առցանց) հատոր 4, No.14, էջ 67:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն (2018). «Հայաստանի Հանրապետության աշխատաշուկան 2018թ.», https://www.armstat.am/en/?nid=82&id=2106:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն (2017). «2017թ. աշխատուժի տվյալների շտեմարան» https://www.armstat.am/am/?nid=212:

ՏՀԶԿ (2002/2004/2006): «Զբաղվածության հեռանկար»: Փարիզ. ՏՀԶԿ

Ժ. Պատուրյան, Վ. Գևորգյան, (2016). «Կամավորությունը Հայաստանում. հրաժարում խորհրդային ժառանգությունի՞ց», «Կամավորության հեռանկարները. ձայներ հարավից», համախմբագիրներ՝ Ժաքլին Բատչեր Գարսիա-Կոլին և Քրիստոֆ Այնոլֆ: «Springer International Publishing AG հրատարակչություն»:

Ջ. Պիտերս (2013). «Երիտասարդների զբաղվածությունը զարգացող երկրներում», Աշխատաշուկայի ուսումնասիրման ինստիտուտի (IZA) հետազոտական զեկույց No. 58

Գ. Քվինտինի, Ս. Մարտին (2014). «Նույն, բայց տարբեր. դպրոցից աշխատաշուկա անցումը զարգացող և առաջատար տնտեսություններում»: Սոցիալական, զբաղվածության և միգրացիայի ոլորտների ՏՀԶԿ աշխատանքային փաստաթղթեր No. 154:

Ն. Սերիեր, (2014). «Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց անցումն աշխատաշուկա», Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Ժնև. https://www.un.am/up/library/Labor_Market_Armenia_eng.pdf

Համաշխարհային բանկ (2016). «Գենդերային գնահատումը Հայաստանում. աղքատության և հավասարության համաշխարհային փորձառություն» http://documents.worldbank.org/curated/en/250481491242159715/pdf/113990-WP-P157626-PUBLIC-Armenia-Gender-Assessment-2016.pdf

Հավելվածներ

Հավելված 1. Գործազրկությունն ըստ մասնագիտությունների

Շիրակ. գործազուրկներն ըստ մասնագիտությունների, 2018թ.



Աղբյուր՝ Զբաղվածության պետական գործակալություն, Հայաստան, 2018թ.

Լոռի. գործազուրկներն ըստ մասնագիտությունների, 2018թ.



Աղբյուր՝ Զբաղվածության պետական գործակալություն, Հայաստան, 2018թ.

Տավուշ. գործազուրկներն ըստ մասնագիտությունների, 2018թ.



Աղբյուր՝ Զբաղվածության պետական գործակալություն, Հայաստան, 2018թ.

Գեղարքունիք. գործազուրկներն ըստ մասնագիտությունների, 2018թ.



Աղբյուր՝ Զբաղվածության պետական գործակալություն, Հայաստան, 2018թ.

Հավելված 2. Ուսանողներն ըստ մասնագիտությունների

Շիրակ. Հայաստանի 12 բուհերի ուսանողներն ըստ մասնագիտությունների, 2019թ.

Ուսումնասիրության ոլորտ	Ֆակուլտետ	Ընդհանուր	Տղամարդ	Կին
Ծառայություններ, այդ թվում՝ զբոսաշրջություն	Սպասարկում և զբոսաշրջություն	**92**	15	77
Երկրաբանություն, քարտեզագրություն և կադաստրային գործ	Աշխարհագրություն և երկրաբանություն	**88**	58	30
Աստվածաբանություն	Աստվածաբանություն	**8**	2	6
Արաբագիտություն, իրանագիտություն, թուրքագիտություն	Արևելագիտություն	**33**	10	23
Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն, անգլերեն, ֆրաներեն, իսպաներեն, գերմաներեն	Եվրոպական լեզուներ և հաղորդակցություն	**213**	6	207

լեզու և գրականություն, թարգմանություն, եվրոպագիտություն				
Ռուսաց լեզու և գրականություն	Ռուսաց լեզու և գրականություն	**47**	3	44
Ժամանակակից հայոց լեզու և թարգմանություն, հայոց լեզու և գրականություն, ցեղասպանության ուսումնասիրություն, համաշխարհային գրականություն և տեսություն	Բանասիրություն (հայոց լեզու)	**105**	2	103
Սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք	Սոցիոլոգիա	**203**	24	179
Լրագրություն, կապեր հասարակայնության հետ և հաղորդակցություն	Լրագրություն	**30**	5	25
Իրավագիտություն	Իրավագիտություն	**158**	88	70
Փիլիսոփայություն և հոգեբանություն	Փիլիսոփայություն և հոգեբանություն	**169**	42	127
Մանկավարժություն և կրթության կազմակերպում	Մանկավարժություն և կրթություն	**401**	1	400
Միջազգային հարաբերություններ, հանրային վարչարարություն, քաղաքագիտություն	Միջազգային հարաբերություններ և հանրային վարչարարություն	**115**	50	65
Պատմություն	Պատմություն	**135**	42	93
Մշակույթ և արվեստ, դիզայն	Մշակույթ և արվեստ	**133**	53	80
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,տեղեկատվական անվտանգություն, համակարգչային գիտություններ, մեխանիկական հաշվողական համակարգեր, ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	**386**	268	118
Կենսաբանություն	Կենսաբանություն	**112**	15	97

Քիմիա	Քիմիա	**11**	-	11
Դեղագործություն	Դեղագործություն	**103**	20	83
Մաթեմատիկա և մեխանիկա	Մաթեմատիկա և մեխանիկա	**58**	19	39
Ռադիոֆիզիկա	Ռադիոֆիզիկա	**19**	17	2
Հեռահաղորդակցություն		**13**	13	-
Էներգետիկա և էլեկտրատեխնոլոգիա	Էներգետիկա և էլեկտրատեխնոլոգիա	**50**	49	1
Մեքենաշինություն, տրանսպորտային համակարգեր	Մեքենաշինություն, տրանսպորտային համակարգեր	**65**	65	-
Ֆիզիկա	Ֆիզիկա	**23**	12	11
Տնտեսագիտություն, կառավարում ֆինանսներ, բիզնես, հաշվապահական հաշվառում, բանկային գործ, մարքեթինգ	Տնտեսագիտություն և կառավարում	**424**	213	211
Շինարարություն	Շինարարություն	**43**	41	2
Դերասանական արվեստ	Դերասանական արվեստ	**104**	51	53
Ֆիզիկական կրթություն	Ֆիզիկական կրթություն	**158**	155	3
Բուժական գործ	Առողջապահություն	**346**	162	184
Ստոմատոլոգիա	Առողջապահություն	**78**	34	44
Հանրային առողջություն	Առողջապահություն	**2**	1	1
Ագրոնոմիա	Ագրոնոմիա	**17**	10	7
Պարենամթերքի տեխնոլոգիա	Ագրոնոմիա	**37**	28	9
Ագրարային ճարտարագիտություն	Ագրոնոմիա	**24**	24	-
Անասնաբուժություն	Ագրոնոմիա	**26**	24	2
Ագրոբիզնես և տնտեսագիտություն	Ագրոնոմիա	**53**	40	13

Աղբյուր՝ համալսարանների ցանկը ներկայացված է Հավելված 5-ում

Լոռի. Հայաստանի 12 բուհերի ուսանողներն ըստ մասնագիտությունների, 2019թ.

Ուսումնասիրության ոլորտ	Ֆակուլտետ	Ընդհանուր	Տղամարդ	Կին
Ծառայություններ, այդ թվում՝ զբոսաշրջություն	Սպասարկում և զբոսաշրջություն	**75**	12	63

Երկրաբանություն, քարտեզագրություն և կադաստրային գործ	Աշխարհագրություն և երկրաբանություն	**53**	21	32
Աստվածաբանություն	Աստվածաբանություն	**8**	5	3
Արաբագիտություն, իրանագիտություն, թուրքագիտություն	Արևելագիտություն	**21**	7	14
Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն լեզու և գրականություն, թարգմանություն, եվրոպագիտություն	Եվրոպական լեզուներ և հաղորդակցություն	**341**	5	336
Ռուսաց լեզու և գրականություն	Ռուսաց լեզու և գրականություն	**100**	3	97
Ժամանակակից հայոց լեզու և թարգմանություն, հայոց լեզու և գրականություն, ցեղասպանության ուսումնասիրություն, համաշխարհային գրականություն և տեսություն	Բանասիրություն (հայոց լեզու)	**159**	1	110
Սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք	Սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք	**48**	7	41
Լրագրություն, կապեր հասարակայնության հետ և հաղորդակցություն	Լրագրություն	**32**	7	25
Իրավագիտություն	Իրավագիտություն	**150**	96	54
Փիլիսոփայություն և հոգեբանություն	Փիլիսոփայություն և հոգեբանություն	**181**	14	167
Մանկավարժություն և կրթության կազմակերպում	Մանկավարժություն և կրթություն	**451**	18	433
Միջազգային հարաբերություններ, հանրային վարչարարություն, քաղաքագիտություն	Միջազգային հարաբերություններ և հանրային վարչարարություն	**122**	45	77
Պատմություն	Պատմություն	**153**	69	84

Մշակույթ և արվեստ, դիզայն	Մշակույթ և արվեստ	**62**	11	51
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,տեղեկատվական անվտանգություն, համակարգչային գիտություններ, մեխանիկական հաշվողական համակարգեր, ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	**342**	197	145
Կենսաբանություն	Կենսաբանություն	**84**	14	80
Քիմիա	Քիմիա	**2**	1	1
Դեղագործություն	Դեղագործություն	**86**	10	76
Մաթեմատիկա և մեխանիկա	Մաթեմատիկա և մեխանիկա	**62**	18	44
Ռադիոֆիզիկա	Ռադիոֆիզիկա	**16**	13	3
Հեռահաղորդակցություն		**9**	7	2
Էներգետիկա և էլեկտրատեխնոլոգիա		**11**	8	3
Մեքենաշինություն, տրանսպորտային համակարգեր			100	10
Ֆիզիկա	Ֆիզիկա	**17**	7	10
Տնտեսագիտություն, կառավարում ֆինանսներ, բիզնես, հաշվապահական հաշվառում, բանկային գործ, մարքեթինգ	Տնտեսագիտություն և կառավարում	**497**	246	251
Շինարարություն		**77**	71	6
Դերասանական արվեստ	Դերասանական արվեստ	**57**	21	39
Ֆիզիկական կրթություն	Ֆիզիկական կրթություն	**155**	139	16
Բուժական գործ	Առողջապահություն	**209**	91	118
Ստոմատոլոգիա	Առողջապահություն	**23**	10	13
Հանրային առողջություն	Առողջապահություն		-	-
Ագրոնոմիա	Ագրոնոմիա	**11**	6	5
Պարենամթերքի տեխնոլոգիա	Ագրոնոմիա	**26**	11	15
Ագրարային ճարտարագիտություն	Ագրոնոմիա	**13**	13	-

Անասնաբուժություն	Ագրոնոմիա	**10**	7	3
Ագրոբիզնես և տնտեսագիտություն	Ագրոնոմիա	**45**	27	18

Աղբյուր՝ համալսարանների ցանկը ներկայացված է Հավելված 5-ում

Տավուշ. Հայաստանի 12 բուհերի ուսանողներն ըստ մասնագիտությունների, 2019թ.

Ուսումնասիրության ոլորտ	Ֆակուլտետ	Ընդհանուր	Տղամարդ	Կին
Ծառայություններ, այդ թվում՝ զբոսաշրջություն	Սպասարկում և զբոսաշրջություն	**57**	14	43
Երկրաբանություն, քարտեզագրություն և կադաստրային գործ	Աշխարհագրություն և երկրաբանություն	**49**	15	34
Աստվածաբանություն	Աստվածաբանություն	**3**	2	1
Արաբագիտություն, իրանագիտություն, թուրքագիտություն	Արևելագիտություն	**10**	6	4
Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն լեզու և գրականություն, թարգմանություն, եվրոպագիտություն	Եվրոպական լեզուներ և հաղորդակցություն	**73**	3	70
Ռուսաց լեզու և գրականություն	Ռուսաց լեզու և գրականություն	**7**	-	7
Ժամանակակից հայոց լեզու և թարգմանություն, Հայոց լեզու և գրականություն, Ցեղասպանության ուսումնասիրություն, Համաշխարհային գրականություն և տեսություն	Բանասիրություն (հայոց լեզու)	**40**	-	40
Սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք	Սոցիոլոգիա	**32**	4	28
Լրագրություն, կապեր հասարակայնության հետ և հաղորդակցություն	Լրագրություն	**9**	1	8
Իրավագիտություն	Իրավագիտություն	**25**	15	10

Փիլիսոփայություն և հոգեբանություն	Փիլիսոփայություն և հոգեբանություն	**35**	1	34
Մանկավարժություն և կրթության կազմակերպում	Մանկավարժություն և կրթություն	**116**	7	109
Միջազգային հարաբերություններ, հանրային վարչարարություն, քաղաքագիտություն	Միջազգային հարաբերություններ և հանրային վարչարարություն	**28**	10	18
Պատմություն	Պատմություն	**64**	41	23
Մշակույթ և արվեստ, դիզայն	Մշակույթ և արվեստ	**50**	9	41
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,տեղեկատվական անվտանգություն, համակարգչային գիտություններ, մեխանիկական հաշվողական համակարգեր, ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	**52**	30	22
	Կենսաբանություն	**15**	2	13
Քիմիա	Քիմիա	**5**	1	4
Դեղագործություն	Դեղագործություն	**22**	5	17
Մաթեմատիկա և մեխանիկա	Մաթեմատիկա և մեխանիկա	**29**	3	26
Ռադիոֆիզիկա	Ռադիոֆիզիկա	**6**	4	2
Հեռահաղորդակցություն		**3**	3	-
Էներգետիկա և էլեկտրատեխնոլոգիա	Էներգետիկա և էլեկտրատեխնոլոգիա	**7**	7	-
Մեքենաշինություն, տրանսպորտային համակարգեր	Մեքենաշինություն, տրանսպորտային համակարգեր	**50**	48	2
Ֆիզիկա	Ֆիզիկա	**7**	4	3
Տնտեսագիտություն, կառավարում ֆինանսներ, բիզնես, հաշվապահական հաշվառում, բանկային գործ, մարքեթինգ	Տնտեսագիտություն և կառավարում	**160**	78	82
Շինարարություն	Շինարարություն	**3**	2	1

Դերասանական արվեստ	Դերասանական արվեստ	**8**	2	6
Ֆիզիկական կրթություն	Ֆիզիկական կրթություն	**55**	53	2
Բուժական գործ	Առողջապահություն	**115**	32	83
Ստոմատոլոգիա	Առողջապահություն	**33**	25	8
Հանրային առողջություն	Առողջապահություն	**-**	-	-
Ագրոնոմիա	Ագրոնոմիա	**55**	48	7
Պարենամթերքի տեխնոլոգիա	Ագրոնոմիա	**42**	28	14
Ագրարային ճարտարագիտություն	Ագրոնոմիա	**47**	46	1
Անասնաբուժություն	Ագրոնոմիա	**23**	15	8
Ագրոբիզնես և տնտեսագիտություն	Ագրոնոմիա	**42**	27	15

Աղբյուր՝ համալսարանների ցանկը ներկայացված է Հավելված 5-ում

Գեղարքունիք. Հայաստանի 12 բուհերի ուսանողներն ըստ մասնագիտությունների, 2019թ.

Ուսումնասիրության ոլորտ	Ֆակուլտետ	Ընդհանուր	Տղամարդ	Կին
Ծառայություններ, այդ թվում՝ զբոսաշրջություն	Սպասարկում և զբոսաշրջություն	**87**	31	56
Երկրաբանություն, քարտեզագրություն և կադաստրային գործ	Աշխարհագրություն և երկրաբանություն	**76**	39	37
Աստվածաբանություն	Աստվածաբանություն	**10**	5	5
Արաբագիտություն, իրանագիտություն, թուրքագիտություն	Արևելագիտություն	**19**	9	10
Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն լեզու և գրականություն, թարգմանություն, եվրոպագիտություն	Եվրոպական լեզուներ և հաղորդակցություն	**159**	2	157

Ռուսաց լեզու և գրականություն	Ռուսաց լեզու և գրականություն	**34**	-	34
Ժամանակակից հայոց լեզու և թարգմանություն, Հայոց լեզու և գրականություն, Ցեղասպանության ուսումնասիրություն, Համաշխարհային գրականություն և տեսություն	Բանասիրություն (հայոց լեզու)	**167**	1	165
Սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք	Սոցիոլոգիա	**76**	14	62
Լրագրություն, կապեր հասարակայնության հետ և հաղորդակցություն	Լրագրություն	**42**	6	36
Իրավագիտություն	Իրավագիտություն	**261**	202	59
Փիլիսոփայություն և հոգեբանություն	Փիլիսոփայություն և հոգեբանություն	**97**	12	85
Մանկավարժություն և կրթության կազմակերպում	Մանկավարժություն և կրթություն	**345**	6	339
Միջազգային հարաբերություններ, հանրային վարչարարություն, քաղաքագիտություն	Միջազգային հարաբերություններ և հանրային վարչարարություն	**108**	40	68
Պատմություն	Պատմություն	**123**	40	83
Մշակույթ և արվեստ, դիզայն	Մշակույթ և արվեստ	**104**	25	79
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,տեղեկատվական անվտանգություն, համակարգչային գիտություններ, մեխանիկական հաշվողական համակարգեր, ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	**218**	141	77
Կենսաբանություն	Կենսաբանություն	**96**	9	87
Քիմիա	Քիմիա	**13**	2	11
Դեղագործություն	Դեղագործություն	**83**	19	64

Մաթեմատիկա և մեխանիկա	Մաթեմատիկա և մեխանիկա	**46**	6	40
Ռադիոֆիզիկա	Ռադիոֆիզիկա	**11**	7	4
Հեռահաղորդակցություն		**11**	14	-
Էներգետիկա և էլեկտրատեխնոլոգիա	Էներգետիկա և էլեկտրատեխնոլոգիա	**39**	35	4
Մեքենաշինություն, տրանսպորտային համակարգեր	Մեքենաշինություն, տրանսպորտային համակարգեր	**24**	21	3
Ֆիզիկա	Ֆիզիկա	**17**	6	11
Տնտեսագիտություն, կառավարում ֆինանսներ, բիզնես, հաշվապահական հաշվառում, բանկային գործ, մարքեթինգ	Տնտեսագիտություն և կառավարում	**435**	278	157
Շինարարություն		**2**	2	-
Դերասանական արվեստ	Դերասանական արվեստ	**10**	5	5
Ֆիզիկական կրթություն	Ֆիզիկական կրթություն	**168**	156	12
Բուժական գործ	Առողջապահություն	**227**	107	120
Ստոմատոլոգիա	Առողջապահություն	**51**	26	25
Հանրային առողջություն	Առողջապահություն	**-**	-	-
Ագրոնոմիա	Ագրոնոմիա	**33**	24	9
Պարենամթերքի տեխնոլոգիա	Ագրոնոմիա	**54**	36	18
Ագրարային ճարտարագիտություն	Ագրոնոմիա	**54**	54	-
Անասնաբուժություն	Ագրոնոմիա	**26**	20	6
Ագրոբիզնես և տնտեսագիտություն	Ագրոնոմիա	**68**	53	15

Աղբյուր՝ համալսարանների ցանկը ներկայացված է Հավելված 5-ում

Հավելված 3. Զբաղվածությունն ըստ մասնագիտությունների և սեռի

Շիրակ. զբաղվածությունն ըստ մասնագիտությունների և սեռի, 2017թ.



Աղբյուր՝ ՀԱԿԾ, Աշխատուժի տվյալների շտեմարան, 2017թ.

Լոռի. զբաղվածությունն ըստ մասնագիտությունների և սեռի, 2017թ.



Աղբյուր՝ ՀԱԿԾ, Աշխատուժի տվյալների շտեմարան, 2017թ.

Տավուշ. զբաղվածությունն ըստ մասնագիտությունների և սեռային խմբերի, 2017թ.



Աղբյուր՝ ՀԱՎԾ, Աշխատուժի տվյալների շտեմարան, 2017թ.

Գեղարքունիք. զբաղվածությունն ըստ մասնագիտությունների և սեռի, 2017թ.



Աղբյուր՝ ՀԱՎԾ, Աշխատուժի տվյալների շտեմարան, 2017թ.

Հավելված 4. Համալրված/ թափուր աշխատատեղերն ըստ շուկայի ոլորտների

Շիրակ. թափուր և համալրված աշխատատեղերը 2018թ.



Աղբյուր՝ Զբաղվածության պետական գործակալություն, Հայաստան, 2018թ.

Լոռի. թափուր և համալրված աշխատատեղերը 2018թ.



Աղբյուր՝ Զբաղվածության պետական գործակալություն, Հայաստան, 2018թ.

Տավուշ. թափուր և համալրված աշխատատեղերը 2018թ.



Աղբյուր՝ Զբաղվածության պետական գործակալություն, Հայաստան, 2018թ.

Գեղարքունիք. թափուր և համալրված աշխատատեղերը 2018թ.



Աղբյուր՝ Զբաղվածության պետական գործակալություն, Հայաստան, 2018թ.

Հավելված 5. Բուհեր

1. Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)

2. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

3. Հայաստանի ազգային ագրարային համալսարան

4. Հայկական պետական մանկավարժական համալսարան

5. Երևանի պետական բժշկական համալսարան

6. Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ

7. Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան

8. Ռուս-հայկական համալսարան

9. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայկական պետական ինստիտուտ

10. ՀՀ պետական կառավարման ակադեմիա

11. Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան

11. Գավառի պետական համալսարան

12. Վանաձորի պետական համալսարան

13. Շիրակի պետական համալսարան

14. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ

Հավելված 6. Քննարկում ֆոկուս խմբերում գործազուրկների հետ. ֆոկուս խմբի ուղեցույց

Ծանոթություն. Բարի օր, իմ անունը _____ է: Շնորհակալ եմ, որ համաձայնել եք մասնակցել մեր ֆոկուս խմբի քննարկմանը: Այսօր խոսելու ենք գործազրկության և այն խոչընդոտների մասին, որոնց բախվում եք աշխատանք փնտրելիս: Այս քննարկումն ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի համար իրականացվող ավելի ծավալուն նախնական ուսումնասիրության մաս է կազմում: Քննարկման նպատակն է գնահատել

ընդհանուր իրավիճակը ձեր մարզում և բացահայտել դրա հիմքում ընկած պատճառները: Կարող եմ հավաստիացնել ձեզ, որ այստեղ ասված ամեն ինչ խիստ գաղտնի է մնալու: Քննարկումը ձայնագրվում է, որպեսզի մենք որևէ կարևոր բան բաց չթողնենք, սակայն ինձնից ու հետազոտություն իրականացնող իմ գործընկերներից բացի այս ձայնագրությունը ոչ ոքին հասանելի չի լինելու: Ուզում եմ, որ քննարկման ընթացքում մի քանի պարզ կանոնների հետևենք: Եկեք բոլորս լսենք միմյանց, հարգենք յուրաքանչյուրի կարծիքը և միաժամանակ չխոսենք:

1. Պատմեք ձեր մասին, մասնավորապես, կրթության մասին, այդ թվում՝ արհեստագործական կրթության (եթե այդպիսին կա), աշխատանքային փորձի մասին (եթե այդպիսին կա), նաև՝ որքա՞ն ժամանակ եք գործազուրկ եղել:
2. Ինչո՞ւ եք որոշել հենց այդ մասնագիտությունն ընտրել:
3. Նշե՛ք, խնդրեմ, ձեր գործազրկության հիմնական պատճառները:
4. Մասնակցե՞լ եք արդյոք երբևէ որևէ հարցազրույցի: Ձեր կարծիքով, ինչո՞ւ ձեզ չեն ընտրել: Եթե ընտրել են, ինչո՞ւ չեք ընդունել աշխատանքի հրավերը:
5. Ինչո՞ւ չեք կարողանում աշխատանք գտնել: Նշե՛ք հիմնական պատճառները:
6. Նշե՛ք ձեր փնտրած աշխատանքի հիմնական բնութագրերը (վայրը, աշխատավարձը և այլն):
7. Ի՞նչ քայլեր եք ձեռնարկել աշխատանք գտնելու նպատակով: Ինչո՞ւ եք հենց այդ քայլերին դիմել:
8. Երբևէ դիտարկե՞լ եք մասնագիտական զարգացման հնարավորությունը:
9. Երբևէ մտածե՞լ եք սեփական բիզնես սկսելու մասին: Ինչո՞ւ՝ այո, ինչո՞ւ՝ ոչ:
10. Ի՞նչ կարծիքի եք Զբաղվածության պետական գործակալության գործունեության մասին: Արդյո՞ք այն կարող է օգնել ձեզ աշխատանք գտնելու հարցում:
11. Նշե՛ք ձեր մարզում երիտասարդների գործազրկության խնդրի լուծման հնարավոր տարբերակները:

Հավելված 7. Խորքային հարցազրույցի ուղեցույց

Գործատուների հետ հարցազրույցի ուղեցույց

Ծանոթություն. Բարի օր, իմ անունը _____ է: Շնորհակալ եմ, որ համաձայնել եք զրուցել ինձ հետ աշխատանքի պահանջարկի և ձեր ընկերությունում մարդկային ռեսուրսների հավաքագրման մասին: Այս հարցազրույցը ՄԱԶԾ-ի հայաստանյան

գրասենյակի համար իրականացվող ավելի ծավալուն նախնական ուսումնասիրության մաս է կազմում: Հարցազրույցի նպատակն է գնահատել ձեր մարզում աշխատաշուկայի ընդհանուր իրավիճակը, հայտնաբերել բացթողումներն ու բացահայտել դրանց հիմքում ընկած պատճառները: Կարող եմ հավաստիացնել ձեզ, որ այստեղ ասված ամեն ինչ խիստ գաղտնի է մնալու: Հարցազրույցը ձայնագրվում է, որպեսզի մենք որևէ կարևոր բան բաց չթողնենք, սակայն ինձնից ու հետազոտություն իրականացնող իմ գործընկերներից բացի այս ձայնագրությունը ոչ ոքին հասանելի չի լինելու:

1. Ինչպիսի՞ն է ձեր կազմակերպությունում աշխատանքի ընդունման ընթացակարգը: Ինչպե՞ս եք դիմորդներին գրավում:
2. Որտե՞ղ է ձեր աշխատակիցների մեծամասնությունը (մարզ, քաղաք): Ինչո՞ւ:
3. Ի՞նչ տարիքի և սեռի է ձեր աշխատակիցների մեծամասնությունը: Մանրամասնեք, խնդրեմ:
4. Արդյո՞ք դժվար է գտնել ձեզ անհրաժեշտ մասնագետներին: Մանրամասնեք, խնդրեմ:
5. Համագործակցո՞ւմ եք կամ երբևէ համագործակցե՞լ եք Զբաղվածության պետական գործակալության հետ: Մանրամասնեք, խնդրեմ:
6. Ձեր կազմակերպությունն ունի՞ արդյոք որևէ կամավորության/պրակտիկայի/աշկերտության ծրագիր: Եթե այո, համագործակցո՞ւմ եք արդյոք տեղական համալսարանների հետ: Եթե այո, մանրամասնեք, խնդրեմ, համագործակցության բնույթը:
7. Ձեր կարծիքով, կօգնի՞ արդյոք համալսարանների հետ համատեղ կազմակերպվող վճարովի պրակտիկայի/աշկերտության ծրագիրը ձեր կազմակերպությանը՝ գտնել ձեզ անհրաժեշտ մասնագետներին: Մանրամասնեք, խնդրեմ:
8. Ո՞ր մասնագիտություններն են առավել պահանջված աշխատանքի շուկայում:
9. Ինչպիսի՞ հմտություններ, այդ թվում՝ փափուկ հմտություններ, պետք է ունենա դիմորդը, որպեսզի կարողանա աշխատել ձեր կազմակերպությունում:
10. Ինչո՞ւ ուսանողները բուհն ավարտելուց հետո չեն կարողանում աշխատանք գտնել: Որո՞նք են հիմնական պատճառները:
11. Որո՞նք են մարզում գործազրկության հիմնական պատճառները:
12. Նշված խնդիրների լուծման ինչպիսի՞ տարբերակներ եք տեսնում:

Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների ղեկավարների հետ հարցազրույցի ուղեցույց

Ծանոթություն. Բարի օր, իմ անունը _____ է: Շնորհակալ եմ, որ համաձայնել եք զրուցել ինձ հետ մարզում ՏՏ ոլորտում աշխատանքի պահանջարկի և առաջարկի, ներկա թերությունների և առկա հնարավորությունների մասին: Այս հարցազրույցը ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի համար իրականացվող ավելի ծավալուն նախնական ուսումնասիրության մաս է կազմում: Հարցազրույցի նպատակն է գնահատել ձեր մարզում աշխատաշուկայի ընդհանուր իրավիճակը, հայտնաբերել բացթողումներն ու բացահայտել դրանց հիմքում ընկած պատճառները: Կարող եմ հավաստիացնել ձեզ, որ այստեղ ասված ամեն ինչ խիստ գաղտնի է մնալու: Հարցազրույցը ձայնագրվում է, որպեսզի մենք որևէ կարևոր բան բաց չթողնենք, սակայն ինձնից ու հետազոտություն իրականացնող իմ գործընկերներից բացի այս ձայնագրությունը ոչ ոքին հասանելի չի լինելու:

1. Ինչպիսի՞ն է ձեր կազմակերպությունում աշխատանքի ընդունման ընթացակարգը: Ինչպե՞ս եք դիմորդներին գրավում:
2. Որտե՞ղ է ձեր աշխատակիցների մեծամասնությունը (մարզ, քաղաք): Ինչո՞ւ:
3. Արդյո՞ք դժվար է գտնել ձեզ անհրաժեշտ մասնագետներին: Մանրամասնեք, խնդրեմ:
4. Համագործակցո՞ւմ եք կամ երբևէ համագործակցե՞լ եք Զբաղվածության պետական գործակալության հետ: Մանրամասնեք, խնդրեմ:
5. Ունե՞ք արդյոք որևէ կամավորության/պրակտիկայի/աշկերտության ծրագիր: Եթե այո, համագործակցո՞ւմ եք արդյոք տեղական համալսարանների հետ: Եթե այո, մանրամասնեք, խնդրեմ, համագործակցության բնույթը:
6. Ձեր կարծիքով, կօգնի՞ արդյոք համալսարանների հետ համատեղ կազմակերպվող վճարովի պրակտիկայի/աշկերտության ծրագիրը ՏՏ կազմակերպություններին՝ գտնել նրանց անհրաժեշտ մասնագետներին: Մանրամասնեք, խնդրեմ:
7. Ինչպիսի՞ հմտություններ, այդ թվում՝ փափուկ հմտություններ, պետք է ունենա դիմորդը, որպեսզի կարողանա աշխատել ՏՏ ոլորտում:
8. Որո՞նք են այս ոլորտի զարգացման դժվարությունները:
9. Որո՞նք են այս ոլորտի զարգացման հնարավորությունները:
10. Արդյո՞ք այս ոլորտում զարգանում է ձեռնարկատիրությունը: Ի՞նչ դժվարությունների են բախվում երիտասարդները ՏՏ ոլորտում բիզնես սկսելիս:
11. Ինչո՞ւ ուսանողները բուհն ավարտելուց հետո չեն կարողանում աշխատանք գտնել: Որո՞նք են հիմնական պատճառները:
12. Որո՞նք են մարզում գործազրկության հիմնական պատճառները:
13. Նշված խնդիրների լուծման ինչպիսի՞ տարբերակներ եք տեսնում:

Մարզպետարանների ներկայացուցիչների հետ հարցազրույցի ուղեցույց

Ծանոթություն. Բարի օր, իմ անունը _____ է: Շնորհակալ եմ, որ համաձայնել եք զրուցել ինձ հետ մարզային տնտեսությունում տիրող իրավիճակի, աշխատանքի շուկայի և գործազրկության մասին: Այս հարցազրույցը ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի համար իրականացվող ավելի ծավալուն նախնական ուսումնասիրության մաս է կազմում: Հարցազրույցի նպատակն է գնահատել ձեր մարզում աշխատաշուկայի ընդհանուր իրավիճակը, հայտնաբերել բացթողումներն ու բացահայտել դրանց հիմքում ընկած պատճառները: Կարող եմ հավաստիացնել ձեզ, որ այստեղ ասված ամեն ինչ խիստ գաղտնի է մնալու: Հարցազրույցը ձայնագրվում է, որպեսզի մենք որևէ կարևոր բան բաց չթողնենք, սակայն ինձնից ու հետազոտություն իրականացնող իմ գործընկերներից բացի այս ձայնագրությունը ոչ ոքին հասանելի չի լինելու:

1. Որո՞նք են մարզում շուկայի հիմնական ոլորտները, որ զարգանում են և շարունակական աճի ներուժ ունեն: Մանրամասնեք յուրաքանչյուրը, խնդրեմ:
2. Կա՞ արդյոք որևէ ոլորտ, որ զարգացման ներուժ ունի, բայց չի զարգանում: Եթե այո, ինչո՞ւ:
3. Կա՞ն արդյոք շուկայի կոնկրետ ոլորտին ուղղված զարգացման ծրագրեր: Մանրամասնեք, խնդրեմ:
4. Կա՞ն արդյոք գործազրկության խնդրի լուծման ծրագրեր: Մանրամասնեք, խնդրեմ:
5. Ակնկալվո՞ւմ են արդյոք խոշոր ներդրումներ: Մանրամասնեք, խնդրեմ:
6. Որո՞նք են ձեր նշած շուկայի ոլորտներից յուրաքանչյուրի զարգացման հիմնական խնդիրները:
7. Որո՞նք են մարզում երիտասարդների գործազրկության հիմնական պատճառները:
8. Որո՞նք են մարզում բիզնես սկսելու հիմնական խոչընդոտները: Արդյո՞ք կան դժվարություններ երիտասարդների պարագայում:
9. Ձեր կարծիքով, որո՞նք նշված խնդիրների լուծման տարբերակները:

ՀԿ-ների ներկայացուցիչների հետ հարցազրույցի ուղեցույց

Ծանոթություն. Բարի օր, իմ անունը _____ է: Շնորհակալ եմ, որ համաձայնել եք զրուցել ինձ հետ մարզում կամավորության, ներկա թերությունների և կամավորության զարգացման պոտենցիալ հնարավորությունների մասին: Այս հարցազրույցը ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի համար իրականացվող ավելի ծավալուն նախնական ուսումնասիրության մաս է կազմում: Հարցազրույցի նպատակն է գնահատել ձեր մարզում աշխատաշուկայի ընդհանուր իրավիճակը, հայտնաբերել բացթողումներն ու բացահայտել դրանց հիմքում ընկած պատճառները: Կարող եմ հավաստիացնել ձեզ, որ այստեղ ասված ամեն ինչ խիստ գաղտնի է մնալու: Հարցազրույցը ձայնագրվում է, որպեսզի մենք որևէ կարևոր բան բաց չթողնենք, սակայն ինձնից ու հետազոտություն իրականացնող իմ գործընկերներից բացի այս ձայնագրությունը ոչ ոքին հասանելի չի լինելու:

1. Նկարագրեք, խնդրեմ, մարզում կամավորության/պրակտիկայի գործընթացը: Ինչպե՞ս եք գնահատում կամավորության բնագավառում երիտասարդների ներգրավվածության մակարդակը:
2. Ինչպիսի՞ն է կամավորների ժողովրդագրական բնութագիրը (վայր, սեռ, տարիք): Նշե՛ք նման բնութագրի պատճառները:
3. Ի՞նչն է խոչընդոտում երիտասարդների ներգրավվածությանը կամավորության ոլորտում:
4. Համագործակցո՞ւմ եք արդյոք համալսարանների հետ ուսանողներին կամավոր գործունեության մեջ ներգրավվելու նպատակով: Ինչո՞ւ՝ այո, ինչո՞ւ՝ ոչ: Մանրամասնեք, խնդրեմ:
5. Ձեր կարծիքով, ինչո՞ւ են երիտասարդներն ուզում կամավոր աշխատել: Ո՞րն է երիտասարդների համար այդ գործընթացի ամենագրավիչ կողմը:
6. Որո՞նք են կամավորների հիմնական պարտականությունները: Ինչպիսի՞ աշխատանք են նրանք կատարում:
7. Առաջադրանք տալու ժամանակ արդյո՞ք հաշվի եք առնում կամավորների մասնագիտությունը:
8. Ձեր կարծիքով, ո՞րն է մարզում երիտասարդների գործազրկության պատճառը:
9. Կարո՞ղ է արդյոք կամավորությունը, պրակտիկան, աշկերտությունն օգնել երիտասարդներին աշխատանք գտնել շուկայում: Մանրամասնեք, խնդրեմ:
10. Ի՞նչ է անհրաժեշտ մարզում կամավոր գործունեության զարգացման համար: